Տավուշի մարզում 23 տարի առաջ՝ 2002-2003 ուսումնական տարում, հանրակրթական դպրոցներում 21 հազար 896 աշակերտ էր սովորում: Անցած 23 տարում մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը նվազել է 6 հազար 428-ով: Դպրոցների աշակերտների թվի նվազման հետեւանքով նվազել է նաեւ դպրոցների շրջանավարտների թիվը:

Կարդացեք՝ էջ 4

Ո՞վ ես դու, որ որոշես՝ մենք պետք է հրաժարվենք պայքարելուց: Այսօր տնօրեն ես, վաղը տնօրեն չես: Խնդիրն այն չէ, որ այսօր ունենք անհաջող իշխանություն, խնդիրն այն է, որ մենք մեր իշխանությունը չունենք: Խնդիրն այն է, որ չարժեքը հարձակվել է արժեքների վրա: Չարժեքն ուզում է մեր բոլոր արժեքները ոչնչացնել:

Կարդացեք՝ էջ 7

Բիզնեսմեններն էլ են, ախր, հետաքրքիր մարդիկ: Փոխանակ իրենք հրավիրեին էս Զախորդ Փանոսին, հանդիմանեին վերջին 8 տարիներին հայկական բիզնեսի գլխին բերած չարիքների համար, մի բան էլ իրենք էին վազել՝ հանդիպելու նրա հետ, նախաճաշելու: Ինչքան իրար հակասող (ներմուծող-արտահանող) բիզնեսմեն կար, այնտեղ էր:

Կարդացեք՝ էջ 8


# Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 61 (4196), 15 ապրիլ, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Ինչեւ 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել եւ վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություն, դրանք ապահովել անհրաժեշտ գույքով եւ սարքավորումներով. Նիկոլ Փաշինյանի գլխավորած կառավարությունը նման խոստում էր տալիս, որն ամրագրված է կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրում: Իշխանականները, հատկապես հունիսյան ընտրություններին ընդառաջ, «դրոշակ» դարձրած՝ ծածանում են վերանորոգված, հիմնանորոգված դպրոցների, մանկապարտեզների լուսանկարները: Մինչդեռ պարզվում է, որ այս հարցում եւս Փաշինյանն ու իր խմբակը, մեղմ ասած, ստում են, քանի որ դեռեւս կառավարության 2015 թ. հուլիսի 23-ի որոշում կա՝ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» վերաբերյալ, որի շրջանակներում դեռեւս 2015-ից տասնյակ դպրոցներ են վերանորոգվել ու հիմնանորոգվել, տասնյակներն էլ կիսատ են մնացել, եւ ներկայիս իշխանություններն ընդամենը շարունակել են կիսատ մնացած աշխատանքներն ու այդ ամենը վերագրել իրենց եւ հիմա ներկայացնում են «300 դպրոց»-ի խոստման տակ:

Թեեւ սկսվել է հունիսի 7-ի ընտրությունների առաջադրումների փուլը, սակայն իշխող «Քաղպայմանագրում» դեռ քննարկում են իրենց նախընտրական ցուցակը եւ հնարավոր է որոշակի փոփոխությունների ենթարկեն արդեն հրապարակված տարբերակը: «Անձեռնմխելի» է համարվում առաջին 50 համարը: Ի դեպ, օրենքի պահանջն է, որ առաջին 30-ը պետք է հաստատվի համագումարում, սակայն վարչությունը որոշել է, որ կարող են 50 համարից հետո գտնվողների միջեւ տեղափոխություններ կատարել: Երկրորդ 50-յակում փոփոխությունը կարող է անել ՔՊ վարչությունը, իսկ 100-ից հետո որոշել են, որ Փաշինյանը միանձնյա է որոշելու՝ ով որտեղ լինի: ՔՊ ներքին ընտրությունների արդյունքներով, շատ հայտնի ՔՊ-ականներ, պատգամավորներ հետին հորիզոնականներում են հայտնվել, թեպետ իրենց պոտենցիալով, գիտելիքներով անհամեմատ տարբերվում են, այսպես կոչված, առաջատարներից: Մեկը, օրինակ, գործող ԱԺ սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանն է՝ 96-րդ տեղում, կամ Մարիա Կարապետյանը եւ այլք: Մեր տեղեկություններով, մինչեւ ապրիլի 17-ը վերջնական տեսքի կբերվի իշխող ուժի ցուցակը:

## Սրտիկներին չխաբվեք

Սրանց յուրաքանչյուր արարքին պետք է նայել հունիսի 7-ի պրիզմայով: Դա կօգնի հասկանալ այս իշխանությունների պահվածքի եւ արարքների շարժառիթները: Եթե կարճ ձեւակերպենք, ապա երկու գործոն է այժմ դեր խաղում՝ ումից են իրենք ամենից շատ վախենում եւ ինչպես են փորձում վախի մթնոլորտ ձեւավորել երկրում: Դատելով քրեական մեթոդներ կիրառելու գործիքակազմից, սրանք ամենից շատ վախենում են Սամվել Կարապետյանի ուժից: Այնքան են վախենում, որ 40 օրական երեխա ունեցող կնոջն են անգամ ձերբակալում՝ նրան մեղադրելով բարեգործության մասին օրենքը խախտելու համար: Որպեսզի հասկանաք՝ այդ ձերբակալության աբսուրդայնությունը, ընդամենը նշեմ, որ ձերբակալության եւ կալանքի մեթոդը կիրառելու անհրաժեշտություն բացարձակապես չկար: Առհասարակ՝ աշխարհում նույնիսկ մարդասպաններին չեն ձերբակալում, մինչեւ դատարանի կողմից դատավճռի արձակումը, իսկ մեզանում ինչ-որ մեկի հետ մի անմեղ զրույցի համար կարող են կրծքի երեխա ունեցողին բանտ տանել: Նիկոլական Հայաստանում կալանքը պատժամիջոց է, կիրառվում է բոլոր այլախոհների ու իրենց չենթարկվողների նկատմամբ: Դա Նիկոլ Փաշինյանի ամենասիրելի «գործիքն» է: Այս գործիքի կիրառումից նրան եւ իր իրավապահներին ոչինչ հետ չի պահում՝ տարեց մարդ կլինի իրենց առաջ, թե նոր-նոր չափահաս դարձած անձ, հիվանդ կլինի, թե կերակրող մայր, հարգված գիտնական, թե հայրենիքի համար կյանքը դրած զինվորական՝ սրանց համար ոչ մի նշանակություն չունի: Ազգի կեսին կալանավորել են, մյուս կեսին պատրաստվում են կալանավորել, եթե, իհարկե, ՔՊ անդամ չէ կամ ՔՊ համակիր: Բայց աբսուրդը տասնապատկվում է նրանով, որ այդ բոլորն անում են զօրուգիշեր սիրուց ու համերաշխությունից, ատելության դեմ պայքարից խոսելով, սրտիկներ ցույց տալով, երգուպարով:

*«Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնության ղեկավար Արման Թաթոյանը, մեզ հասած տեղեկություններով, բանակցություններ է վարում հանրային տարբեր գործիչների հետ՝ նախընտրական ցուցակում նրանց ընդգրկելու առաջարկներով: Նրանցից մեկը լրագրող Ալիսա Գեւորգյանն է, որը 44-օրյա պատերազմում կորցրեց իր միակ զավակին՝ Դավիթին, եւ հարգված անձ է լրագրողական դաշտում: «Միասնության թեւեր»-ում հակված են, որ հենց Ալիսան էլ լինի ցուցակի առաջին կին թեկնածուն: Բանակցություններ կան նաեւ բանասեր, թարգմանիչ, քաղաքական-հասարակական գործիչ, ԵՊՀ ամբիոնի վարիչ Անուշ Սեդրակյանի հետ: Թե ինչ արդյունքներ կունենան այս բանակցությունները, մեր աղբյուրը չհայտնեց: Թաթոյանը, որը դիրքավորվել է նախկինների եւ ներկաների արանքում, ասում են՝ ջանում է անխոցելի ցուցակ կազմել, որ արդյունքներն էլ գոհացուցիչ լինեն:*

## ՄԱՅՐԸ ՀԻՎԱՆԴ Է, ՀԱՅՐԸ ԲԱՆՏՈՒՄ Է

Ոչ միայն ծնողազուրկ երեխաներն են հայտնվում մանկատներում, այլեւ երբեմն նաեւ ծնողներ, տատ ու պապ, հարազատներ ունեցողները: Բերդ համայնքի Այգեձոր գյուղում բնակվող, 2015թ. ծնված Սարգիսի ծնողները հրաժարվել են երեխայի խնամքից: Տղայի մայրը հոգեկան առողջության խնդիրներ ունի, հաշվառված է հոգեբուժարանում, հայրը սպանության համար ազատազրկված է: Անչափահաս տղան գտնվում էր հայրական տատի մոտ, որն օրինական խնամակալ չէ եւ եւս հրաժարվել է երեխայի հետագա խնամքից ու դաստիարակությունից: Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը, հաշվի առնելով իրավիճակը՝ երեխայի տարիքը, նրա կյանքին եւ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգները, Բերդ համայնքի խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովի 2026թ. մարտի 17-ի նիստի եզրակացությունը, որն առաջնորդվել է «երեխայի լավագույն շահով», մարտի 26-ին որոշել է անչափահաս տղային ուղարկել Երեւանի «Զատիկ» երեխաների աջակցման կենտրոն: Նման դեպքերում աշխարհում խնամակալ ընտանիքներ են հայտնվում եւ երեխայի խնամքը վերցնում իրենց վրա:

# ԻՄ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՎ, «ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱԴՐԲԵՋԱՆ» ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԵՆ ՍԿՍԵԼ ԿԻՐԱՌԵԼ

*Նիկոլ Փաշինյանի աջակիցներից կազմված «քաղհասարակության» բոլորին հայտնի ներկայացուցիչներն օրեր առաջ կրկին մեկնել էին Ադրբեջան:*

«2026 թվականի ապրիլի 10-12-ը Ադրբեջանում կայացել է Ադրբեջանի եւ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ երկկողմանի կլոր սեղանի քննարկումը՝ «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության շրջանակներում: «Խաղաղության կամուրջ» նախաձեռնությունը շարունակում է խթանել երկխոսությունը եւ անմիջական փոխազդեցությունը Ադրբեջանի եւ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ: Ըստ APA-ի, այս անգամ հայկական պատվիրակությունն Ադրբեջան է ժամանել ցամաքային սահմանով, հատել է սահմանազատված հատվածը եւ անցել սահմանային եւ անձնագրային վերահսկողության բոլոր համապատասխան ընթացակարգերը»,- գրում է ադրբեջանական ԱՊԱ-ն:

Ադրբեջան էր մեկնել նաեւ Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը: Ի դեպ, քաղաքացիական հասարակության անվան տակ, այս էլ որերորդ անգամ, Ադրբեջան են մեկնում իշխանամետ քաղաքագետներ, այլ ոչ թե քաղհասարակության, այսինքն՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: «Հրապարակը» զրուցել է **Բորիս Նավասարդյանի** հետ:

**- Հավանաբար, Դուք էլ եք բազմիցս լսել, որ Հայաստանում Ձեզ մեղադրում են Ադրբեջան մեկնելու համար, մանավանդ որ որեւէ առանցքային հարցի չեք անդրադառնում, օրինակ՝ գերիների հարցին եւ այլն:**

- Ես չեմ թվարկի, սակայն կասեմ, որ բոլոր այն հարցերը, որոնք հայ-ադրբեջանական հարաբերությունների հետ կապ ունեն, մենք քննարկել ենք: Ինչ վերաբերում է լուծումներին, ապա դրանք միայն մեզնից չեն կախված, եւ ժամանակ է պետք:

**- Իսկ կոնկրետ հայ ռազմագերիների հարցը քննարկվո՞ւմ է այս անգամ:**

- Այդ հարցը քննարկվում է միշտ, ասեմ ավելին՝ այն ամենահաճախ ու խորքային քննարկվող հարցերից է:

**- Ադրբեջանի քաղհասարակության ներկայացուցիչներն ի՞նչ կարծիք ունեն գերիների հարցի մասին:**

- Տարբեր: Այնպես չէ, որ նրանք՝ բոլորը, նույն կարծիքն ունեն: Այդ հարցի լուծումը, ամեն դեպքում, առաջին հերթին իշխանություններից է կախված, այլ ոչ թե քաղաքացիական հասարակությունից:

**- Ադրբեջանի իշխանությունները չեն դադարում խոսել «Արեւմտյան Ադրբեջանի» մասին, ավելին՝ օրերս մի ազերի փորձագետ էր խոսում, թե Հայաստան պետություն գոյություն չունի, որ «Արեւմտյան Ադրբեջան» վերադարձի հարցը մշտապես եղել է իրենց օրակարգում, սակայն քանի որ 1988-ին Արցախի հարցն առաջացել է, այդ պատճառով «Արեւմտյան Ադրբեջանի» օրակարգը հետին պլան է մղվել, իսկ այժմ, քանի որ Արցախի հարցը լուծված է, իրենք հետեւողականորեն զբաղվում են «Արեւմտյան Ադրբեջանն» «ազատագրելու» ծրագրով: Ի՞նչ կարծիք ունեք այս զավթողական քաղաքականության մասին, դուք խաղաղության մասին եք խոսում՝ հանդիպումները կայացնում եք խաղաղության դրոշի տակ, իսկ ադրբեջանական կողմը նման հայտարարություններով է հանդես գալիս:**

- Միշտ քննարկվում է նաեւ այս հարցը: Առհասարակ, բոլոր այն հարցերը, որոնք հետաքրքրում են հայկական եւ ադրբեջանական կողմերին, քննարկվում են անպայմանորեն:

**- Իսկ այդ դեպքում ինչո՞ւ Ադրբեջանն իր հռետորաբանությունը չի փոխում, ստացվում է, որ ձեր քննարկումներն անիմաստ են:**

- Իմ դիտարկումներով, կան որոշակի փոփոխություններ, ամեն դեպքում, «Արեւմտյան Ադրբեջան» բառակապակցությունը, իմ դիտարկումներով, համեմատաբար քիչ են սկսել կիրառել, քան առաջ, դա ինչոր տեղ փոխըմբռնման գործընթացի արդյունք է:

**- Բայց ինչում է այդ եզրույթը:**

- Այո, պարզ է, որ միանգամից չի կարող հարցը լուծվել, քանի դեռ շատ այլ հարցեր լուծված չեն, այս հարցը եւս, բնականաբար, մնում է առկա:

**- Սահմանազատումների հարցերը քննարկո՞ւմ եք:**

- Այո, բոլոր հարցերը քննարկվում են խորքային, սակայն չեմ կարող մանրամասներ նշել:

**- Ամեն անգամ, երբ գնում եք Ադրբեջան, հայ հանրության մի մեծ զանգված քննադատում է ձեզ, այդ հանգամանքը ձեզ չի՞ մտահոգում:**

- Ցանկալի կլիներ, որ մարդիկ ավելի ըմբռնումով մոտենային այս նախաձեռնությանը, սակայն գիտակցում եմ, որ մեր հասարակությունը կարեւոր հարցերի շուրջ ունի շատ տարբեր կարծիքներ:

**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՍՏՈՒԳՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՀԵՏ ՈՒՂԱՐԿՈՒՄ

Ռուսաստանը Հայաստանի համար էժան գազի, սեզոնային աշխատողների եւ նրանց ընտանիքների եկամտի աղբյուր է, մեր առեւտրաշրջանառության զգալի մասի՝ տարբեր գնահատականներով, 35-40 տոկոսն ապահովող երկիրը (իսկ պատժամիջոցները շրջանցող գործարքներով հանդերձ՝ մոտ 60 տոկոսի), նաեւ՝ հայկական գյուղատնտեսական ապրանքների զգալի մասի շուկան:

Չկա մեկը Հայաստանում, որ չհասկանա այս պարզ իրողությունը: Դա հասկանում է նաեւ Նիկոլ Փաշինյանը: Սրանով են, թերեւս, բացատրվում մոսկովյան այցից հետո նրա հաճախակի դարձած հանդիպումները գործարարների հետ: Արդեն գրել էինք, որ օրերս վարչապետ Փաշինյանն «աշխատանքային նախաճաշի» է հրավիրել Հայաստանի խոշոր գործատուներին, որի նպատակը Ռուսաստանի հետ աշխատող հայ գործարարներին հանգստացնելն է եղել: Ըստ «Հրապարակի» աղբյուրների, հանդիպման ժամանակ Փաշինյանն ասել է, որ ամեն ինչ շուտով կկարգավորվի, եւ Ադրբեջանի հետ խաղաղության հեռանկարները նրանց առաջ այլընտրանքային շուկաներ կբացեն՝ ոչինչ, որ ռուսական շուկայից զրկվեք, բայց գործարարները դժգոհ են դուրս եկել հանդիպումից:

Այսօր արդեն նոր տեղեկություն ենք ստացել: «Հրապարակի» աղբյուրը հաղորդում է, որ արդեն մոտ մեկ շաբաթ է, ինչ ռուսները սահմանին թանկարժեք սարքավորում են տեղադրել՝ մոտ 10-12 հազար դոլար արժողության, որով ստուգում են հայկական կոնյակի որակը եւ զանգվածաբար հետ ուղարկում: «Շիշ առ շիշ ստուգում են: Շիշը հանում են, նայում, եւ եթե խաղողի սպիրտը 80 տոկոսից պակաս է, չեն թողնում, որ մտցնեն Ռուսաստան»,- ասում է բիզնես շրջանակի մեր տեղեկացված աղբյուրը: Ըստ դրա, կոնյակի մեծ մասը, բացի Երեւանի կոնյակի գործարանի արտադրանքից, չի բավարարում այդ չափանիշներին: Իհարկե, Ռուսաստանում սրա անունը սանկցիա կամ պատժամիջոց չեն դնում, այլ՝ ֆիտոսանիտարական եւ մաքսային հսկողության խստացում, որը կապում են այն կասկածների հետ, թե Հայաստանն իր շուկան բացել է ԵՄ ապրանքների առաջ եւ թաքուն այլ երկրների ապրանք է ներկրում Ռուսաստան՝ առանց մաքսային վճարումներ անելու: Հասկանալի է, որ ստուգումները քաղաքական հենք ունեն եւ խստացել են Պուտին-Փաշինյան հանդիպումից հետո, որը ցրել է ՌԴ նախագահի վերջին կասկածները՝ Հայաստանի պրոեվրոպական կողմնորոշման հարցում:

Ի դեպ, այս սանկցիաներից տուժելու են նաեւ ռուսաստանցի գործարարները: Մաքսատունը բարձրացրել է «ոչ բարեկամական» երկրներում արտադրված ապրանքների մաքսատուրքը, որոնց թվում են սննդամթերքը, ալկոհոլը, հագուստը, կոսմետիկ միջոցները: Մոսկվայի մարզի ձեռներեցության զարգացման կենտրոնի տվյալներով, ֆրանսիական շրթներկի համար բազային մաքսատուրքը, օրինակ, 6,5 տոկոսից աճել է մինչեւ 35 տոկոս, իսկ ֆրանսիական օծանելիքի համար տուրքն ավելացել է 20 տոկոսով: ՌԴ պետական մարմինները հայտնել են, որ բարձր դրույքաչափերը գործելու են մինչեւ 2027-ի վերջը:

**Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ**
**syuzan.simonyan@hraparak.am**

# ՔՊ-ական քաղաքաթեթի տեղակալն ազատ է արձակվել

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող կոռուպցիոն բնույթի մի քրեական գործի շրջանակում 2024 թվականի տարեվերջին կալանավորվեցին Արարատի ՔՊ-ական համայնքապետ Ասլան Ավետիսյանի տեղակալ Արսեն Հակոբյանը, քաղաքաշինության, հողաշինության, տրանսպորտի եւ կոմունալ ծառայության բաժնի պետ Հրաչ Դավթյանը եւ այլ անձինք: Կոմիտեից գործի վերաբերյալ այդ ժամանակ միայն հայտնել էին. «Մի շարք անձինք ձերբակալվել են քննվող քրեական վարույթի շրջանակում, այդ թվում՝ Արարատի համայնքապետարանի երկու պաշտոնյաներ: Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը»: Արսեն Հակոբյանը մամուլի ուշադրության կենտրոնում է հայտնվել մի շարք սկանդալային պատմություններով, 3 տարի առաջ էլ նրա որդին էր դարձել մամուլի հերոս՝ խոշոր վթարի մեղավորը լինելու դեպքով: Արարատ քաղաքում Հակոբյանը կիսագողականի համբավ ունի, հայտնի է «Բառի Արսեն» անունով: Բացի այդ, Արարատում 4 տարի առաջ ՔՊ-ական Ասլան Ավետիսյանը ղեկավար ընտրվեց հենց Արսեն Հակոբյանի աջակցությամբ, որն առաջադրվել էր Արման Բաբաջանյանի կուսակցության ցուցակով: Նա 13,82 տոկոս էր հավաքել եւ իշխանական թեկնածուին միանալով՝ Ավետիսյանին դարձրեց քաղաքապետ:

Կոռուպցիոն բնույթի սույն քրեական գործը՝ 10 մեղադրյալով, նախորդ տարվանից քննվում է Հակակոռուպցիոն դատարանում՝ դատավոր Սարգիս Պետրոսյանի վարույթում: Հակոբյանն ի սկզբանե գտնվում էր բանտային կալանքի տակ, հետո խափանման միջոցը փոխվեց տնային կալանքով: Մեր տեղեկություններով, որոշ ժամանակ առաջ էլ դատարանը փոխել է Հակոբյանի տնային կալանքը՝ ազատություն շնորհելով պաշտոնյային, իսկ խափանման միջոցի փոփոխությունից հետո նա շարունակում է պաշտոնավարել որպես Արարատի փոխքաղաքապետ:

Հակոբյանի պաշտպան **Ստեփան Նավասարդյանը** հաստատեց մեր տեղեկությունը, որ տնային կալանք խափանման միջոցը փոխվել է, սակայն չնշեց, թե ինչ խափանման միջոց է կիրառվել, իսկ մեղադրանքի վերաբերյալ եւ պաշտոնավարման հետ կապված հարցերին ընդհանրապես չպատասխանեց՝ նշելով, թե գործի մասին խոսելու համար իր վստահորդի համաձայնությունը չունի:

Ըստ մեղադրական եզրակացության՝ Արսեն Հակոբյանն ու Հրաչ Դավթյանը պարբերաբար համագործակցել են միմյանց հետ՝ այս կամ այն հարցի հետ կապված քաղաքացիների հարցերին լուծումներ տալու համար. պահանջել եւ ստացել են 55 հազար դրամից մինչեւ 150 հազար դրամի չափով կաշառք:

**Անանա ՊԱՊԻԿՅԱՆ**

# ԵՎՐՈՊԱՅԻՆ ԷԼ ԳԱԶ ՉՏՎԵՑԻՆ՝ ԵՎՐՈՊԱՆ ՀՈ ՉՎԵՐԱՑԱ՞Վ

*Հարցազրույց ՔՊ-ական պատգամավոր* ***Գագիկ Մելքոնյանի*** *հետ*

**- Փաշինյանի հետ վերջին հանդիպման ժամանակ Ռուսաստանի նախագահը նրան ընտրության առաջ կանգնեցրեց՝ կամ գնում եք ԵՄ, կամ մնում եք ԵԱՏՄ-ում, հակառակ դեպքում՝ ակնարկեց տնտեսական սանկցիաների մասին. գազի գնի բարձրացում եւ այլն: Արդեն արտահանման հետ կապված խնդիրներ, կարծես, ունենք: Ձեր կարծիքով՝ ո՞րը պետք է լինի մեր անելիքը:**

- Դե հիմի, ասենք, վերջին հանդիպումը, վարչապետի հետ բաց-բաց Պուտինը խոսեց, բերեց էս-էս փաստերը, որ կար՝ ասենք, ասեկոսներ էին, բան էին, տարբեր մարդիկ տարբեր բաներ էին խոսում, թե էսա Լարսը կփակեն, էսա բանը..... կամ Ռուսաստանի հետ եք, կամ էլ Արեւմուտքի հետ... էս բոլոր խոսակցությունները՝ էս վերջին հանդիպման ժամանակ, արդեն էդ երկրի առաջին դեմքից լսեցինք: Ինքը բոլոր հարցերի պատասխանը տվեց, ինչպես Լուկաշենկոն էր ասում՝ «հայերը ո՞ւր պիտի գնան»... Այսինքն, Պուտինն անձամբ ասաց, էլի, դուք ո՞ւր պիտի էթաք, կամ պիտի մնաք մեր լծի տակ, կամ էլ պիտի գնաք: «Եթե գնաք Եվրոպայի հետ, մենք ձեր գազը թանկացնենք, մենք մեր օլիգարխներին կուղարկենք Հայաստան, որպեսզի Հայաստանը միջից քանդեն», ու նմանատիպ վախեր առաջացրին մեզ մոտ: Մենք տեսանք, որ արդեն առաջին դեմքն է խոսում այդ ամենի մասին, ինչ լսում էինք շարունակ: Ուրեմն, ինչ որ խոսում էին նախկինում, բոլորը ճիշտ էր: Խոսում էին իրանց 2-րդ, 3-րդ, 4-րդ դեմքերով, բայց վերջնականապես մենք արդեն համոզվեցինք, որ այդ ամենը երկրի առաջին դեմքի գիտությամբ է արվում:

**- Ասում էր, որ պիտի երկու լարի վրա չխաղաք: Ի վերջո, նաեւ մեր օրենսդրությունն է արգելում, որ ԵԱՏՄ կազմում լինելով՝ ԵՄ մտնենք:**

- Ուրեմն, մենք որտեղ ուզենանք, էնտեղ էլ կգնանք: Մեր երկիրն անկախ չի՞, Պուտինն ինչ ասի, պիտի անե՞նք: Ես համաձայն չեմ դրան, մենք լարի վրա խաղացող չենք, մենք պետություն ենք, որ ցանկանում ենք բոլոր պետությունների հետ ունենանք բարիդրացիական հարաբերություններ, լավ հարաբերություններ, առեւտուր անենք՝ վերջ: Ամեն ինչը բոլորի հետ պետք է անենք մենք: Մենք կախված չենք Ռուսաստանի կռուչոկից, որ ինքն ասի՝ դու իրավունք չունես սրանց հետ խոսաս, դու իրավունք չունես սրա հետ առեւտուր անես, ու մնացած տեղերում էլ, որտեղ պետք է, ես ձեր փոխարեն կխոսեմ, բայց էս վերջերում ինքը տեսավ, որ մեր փոխարեն չի խոսում, մենք ենք խոսում մեր փոխարեն: Մեր կյանքում Թուրքիայի հետ երբեւիցե Հայաստանը չի խոսացել, բայց խոսում է արդեն: Էդ մեր անկախության ցուցիչն է:

**- Մեր տնտեսությունը մեծապես կախված է Ռուսաստանից, ոչ թե ԵՄ-ից, հիմա, ասենք, եթե մեր գազը թանկանա՝ 500 դոլարից ավելի վճարենք, դա նշանակում է, որ մենք ավելի՞ անկախ կլինենք:**

- Ուրեմն, ձեր գազը հիմի 400 դոլար է, էդ որ Պուտինն ասում է՝ էլի կբարձրանա: Մենք 400 դոլարից էժան չենք առնում: Հիմի դուք գազը, որ ձեր տանը վառում եք, ինչքա՞ն եք վճարում՝ 170 դոլա՞ր:

- Մեր անվտանգությունը ռուսն է պահել, 20-ին ռուսը պահեց մեր անվտանգությունը, 22-ին, երբ որ մտան մեր սահմանը, հակառակորդը մինչեւ հիմի մեր սահմանում է, Պուտի՞նը պահեց՝ իրա ՀԱՊԿ-ով:

**- Պուտինն ինչի՞ պիտի մեր սահմանը պահի: Մենք պիտի պահենք:**

- Այո, մենք ենք անելու, մենք ունենք պայմանագիր, մեր անվտանգության երաշխավորը եղել է Ռուսաստանը, բայց ինքը տեսանք՝ ինչ ձեւի մեր անվտանգությունը պաշտպանեց, երբ որ արդեն ադրբեջանցիները գտնվում էին մեր տարածքի մեջ, ինքն ասում էր՝ չգիտենք ում տարածքն է:

**- Պարոն Մելքոնյան, լավ, իսկ ի՞նչ է տալիս Արեւմուտքը մեզ, որ մենք փչացնում ենք հարաբերությունները Ռուսաստանի հետ:**

- Մի որպե, մենք նախ՝ Արեւմուտքին հայտ չենք ներկայացրել:

**- Որովհետեւ այնտեղ չեն էլ սպասում մեզ, հայտարարել են մի քանի անգամ:**

- Որտե՞ղ են մեզ սպասում՝ մեզ ոչ մի տեղ էլ չեն սպասում: Երկիր ես, գնա, եղունգ ունես՝ գլուխդ քորի: Մեր անվտանգության երաշխավորը մենք ենք, մեր երկրի, որ մենք պիտի պահենք: Դուք չհամոզվեցի՞ք 20 թվին, 90 թվին, 94 թվին, որ մենք էինք կռվում:

**- Իսկ ինչո՞ւ ենք ասում՝ գնում ենք ԵՄ, խորհրդարանում նախագիծ ընդունեցինք, Ռուսաստանին մեր դեմ հատուկ լարում՝ չարացնում ենք:**

- Մի վայրկյան, Ռուսաստանին ո՞վ է չարացրել: Ռուսաստանն ինքն է չարանում իր դեմ, մենք հայտ չենք ներկայացրել, որ մենք վաղը գնում ենք դեպի Եվրոպա, մենք Եվրոպա հլը չգիտենք՝ եթե հայտ ներկայացնենք, դրանից հետո, քանի տարի հետո պիտի բան անենք, որ Եվրոպա գնանք, երբ պիտի մեզ ընդունեն իրենք: Մենք ապրում ենք, աշխատում ենք Ռուսաստանի հետ, Ամերիկայի հետ, Ֆրանսիայի հետ, Հնդկաստանի հետ, Իրանի հետ, բոլորի հետ էլ մենք ունենք, նույնիսկ՝ Եվրոպայի, նույնիսկ՝ Չինաստանի հետ: Մենք նախագիծը չե՞նք ընդունել խորհրդարանում: Ընդունե՞լ ենք, բանը, ո՞նց էր կոչվում՝ սկսել աշխատանքներ, որպեսզի զարգացնենք մեր հարաբերությունները: Մենք կապրիզ չունենք, ընդամենն ուզում ենք, որ մեր երկիրը հավասարը հավասարի լինի բոլորի հետ: Ո՞վ է Ռուսաստանին չարացնում, ինքն է ասում՝ չպիտի գնաք սրանց հետ խոսեք, նրանց հետ շփվեք, մենք ում հետ ուզենանք, նրանց հետ էլ պիտի առեւտուր անենք, ցանկանանք ռազմավարական ընկեր դառնալ: Ռուսներն ինչի՞ են նախանձում, ինչի՞ են վախենում, Եվրոպայի անունը տալիս են,... ասում են՝ Եվրոպան մեր թշնամին է, դուք իր հետ գործարք եք անում, մենք էլ ենք թշնամի ունեցել, որ Ռուսաստանի հարազատներն են եղել, մենք իրանց, օրինակ, ասե՞լ ենք՝ ինչի՞ եք էդ պետությունների հետ հարաբերությունների մեջ: Կարելի՞ է ամեն անգամ Լարսը փակել, վառելի՞ք չեն տալիս, գազը կթանկացնենք. հետո ի՞նչ՝ Եվրոպային էլ գազ չտվեցին, Եվրոպան հո չվերացմ՞վ: Մենք չենք ընդունում իրենց ուլտիմատումները, ուզում են մեզ վախեցնել, թե կխառնվենք ձեր ներքին գործերին:



**Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**
**lusine.shahverdyan@hraparak.am**

# ՓԱՇԻՆՅԱՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՈՒԶԵՐ Է՝ ՄԱՐԴ, ՈՐՆ ԱՄԵՆ ԲԱՆ ՏԱՊԱԼԵԼ Է

«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Վիգեն Հակոբյանն** է:

**- ՔՊ-ական իշխանության նախընտրական լոգոտիպը կազմված է հայտնի սրտիկից, անամպ ու կապույտ երկնքից, որտեղ չկա ո՞չ Նիկոլ Փաշինյանի անունը, ո՞չ նրա լուսանկարը, ի տարբերություն նախորդ ընտրությունների լոգոտիպների: Շատերն այդ սրտիկը նմանեցնում են կնոջ կոնքերի, ծաղրում են ՔՊ-ականներին: Ըստ Ձեզ, ՔՊ-ի թրենդային սրտիկն ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ ընտրողի վրա: Մենք բավականին պահպանողական՝ «քյարթու» հասարակություն ենք, ասենք՝ հայ մարդը, հայ տղամարդն ի՞նչ է զգալու՝ այդ սրտիկը տեսնելով:**

- Այն լրիվ արտացոլում է իրենց վարած քարոզչության գաղափարախոսությունը: Այդ թիմն անդադար սրտիկներ է ուղարկում, թիմի ղեկավարից մինչեւ կուսակցության անդամներ: Անգամ ուրախ ավտոբուսների մեջ՝ հերթով, մեկ հրահանգով սրտիկներ են անում: Ուզում են ցույց տալ, որ ինչպես հեղափոխական եղել են, այդպես էլ մնացել են, ուզում են ցույց տալ, որ սիրո եւ հանդուրժողականության հեղափոխությունը շարունակվում է՝ ոչինչ չի փոխվել, որ այսօրվա Նիկոլը հին Նիկոլն է: Ինչ վերաբերում է դրա ազդեցությանը, ապա հիմնականում նրանք աշխատում են իրենց երկաթբետոնյա ընտրազանգվածի վրա, որի համար, անկեղծ ասած, մեծ նշանակություն չունի՝ ՔՊ-ն սրտիկ կանի, քառակուսի ինչ-որ այլ նշաններ ցույց կտա, թե կլոր բաներ: Ոչ մի նշանակություն իրենց համար չունի այդ ամենը, քանի որ նրանք աղանդի հոգեբանությամբ են մոտենում այդ թիմին եւ նրա առաջնորդին, բայց երբ հարցնես, թե ինչու, նրանք չեն կարող այդ հարցին պատասխանել: Բացի այդ, ՔՊ-ն երիտասարդների հետ աշխատելու խնդիր ունի: Նոր սերունդը «քյարթու»-ից դուրս է, դաստիարակվել է այլ չափանիշներով, այլ ֆիլմեր է դիտել եւ ունի այլ պատկերացումներ: Նրանցից շատերն իդեալական են պատկերացնում Արեւմուտքն ու արեւմտյան արժեհամակարգերը: Փաշինյանն ուզում է ցույց տալ, որ ինքը լրիվ նույնն է, ոչինչ չի փոխվել, այն, որ իրենք հարստացել են, միլիոնատերեր են դարձել այս տարիներին, դրանք միֆեր են եւ այլն: Նրանք փորձում են անփորձ ընտրազանգվածի վրա ազդել, որը բաղկացած կլինի երիտասարդներից, մի խոսքով՝ երիտասարդներին խաբելը կարծում են, որ ավելի հեշտ է:

**- Բայց եթե երիտասարդներն առաջադեմ են, չեն համակրում Փաշինյանին, ինչպե՞ս պետք է խաբվեն նրա սրտիկով լոգոտիպին:**

- Ես կարծում եմ, որ ամենագլխավոր պրոբլեմը, որն ունի ՔՊ-ն, դա 18-35 տարեկանների ընտրազանգվածն է, որը չի ընտրում Փաշինյանին: Այդ պատճառով էլ փորձում են երիտասարդներին նման սիմվոլներով գրավել, սրտիկներ-մրտիկներ, վարչաբենդ եւ այլն: Փաշինյանը նաեւ հեծանիվ էր վարում, որը եւս այդ տրամաբանության մեջ է: Նրանց քաղաքտեխնոլոգները հուշել են, որ երիտասարդության հետ պետք է նույն ալիքի վրա լինել, որպեսզի երիտասարդությունը «ծիգրովկայով» տոտաների նման Փաշինյանին ընդունի որպես առաջնորդ: Փաշինյանը փորձում է, կստացվի, թե ոչ, դա այլ հարց է՝ ընտրությունները ցույց կտան, սակայն սոցհարցումները ցույց են տալիս, որ այս բոլոր հնարքներն ազդեցություն չեն ունենում երիտասարդների վրա: Մեր երիտասարդների զգալի մասը կայացած ու գրագետ է, նրանք կարողանում են շատ արագ տուն պահողներ դառնալ: Նրանք ինքնուրույն են եւ ինքնուրույն էլ որոշում են՝ ում ընտրել: 20, 30, 40 տարի առաջ տան մեծերն էին որոշում՝ ում եւ ինչպես ընտրել, բայց հիմա երիտասարդներն են տուն պահողները, եւ նրանք ինքնուրույն են կատարում իրենց ընտրությունը: Նիկոլ Փաշինյանը երիտասարդության համար լուզեր է, մարդ, որն ամեն բան տապալել է: Հաջողակ երիտասարդության մոտ նման կերպարները չեն կարող համակրելի լինել:

**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՊՈՌՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿՆ ԱՐՏԱՀԱՆԵԼ ԵՆՔ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՆՔ ՈՒ ՊԻՏԻ ԱՐՏԱՀԱՆԵՆՔ

Հայաստանից դեպի Ռուսաստան արտահանվող տարբեր ապրանքների մասով ժամանակ առ ժամանակ սահմանափակումներ են մտցվում: Դրանք հիմնականում քաղաքական որոշումների արդյունք են, որով Ռուսաստանն իր վերաբերմունքն է հայտնում Հայաստանի իշխանությունների այս կամ այն քայլի հանդեպ: Երբեմն սահմանափակումներ են իրականացնում նաեւ վրացիները՝ Վրաստանում հավելյալ ստուգումներ սահմանելով իրենց երկրով՝ տրանզիտով անցնող ապրանքների նկատմամբ:

Սակայն այս պահին «պատժամիջոցներ» կիրառողը Ռուսաստանն է, որը դժգոհություններ ունի Նիկոլ Փաշինյանից եւ իր վերաբերմունքն է արտահայտում նրա վարած քաղաքականության նկատմամբ: Արդյունքում տուժում են հայ գործարարները, դեպի Ռուսաստան ապրանք արտահանող եւ այդ արտահանումից եկամուտ ունեցող մարդիկ: Վերջին շրջանում գրվել է հողով տնկիների, ծաղիկների, կոնյակի, ծխախոտի արտահանման դժվարությունների ու արգելքների մասին: Ապրանքների ներկրումը սահմանափակող «Ռոսսելխոզնադզորն» անցած շաբաթ հայտարարեց, որ Պռոշյանի կոնյակի գործարանի արտադրանքը չի համապատասխանում իրենց ստանդարտներին, եւ զրկեցին լիցենզիայից Ռուսաստանի տարածքում: Ապա տեղեկացանք, որ ջերմուկի հետ կապված մի հին քրեական վարույթ են վերակենդանացրել, եւ չի բացառվում, որ առաջիկայում ջերմուկի ներկրումն արգելեն:

Մեր տեղեկություններով, արդեն իսկ Պռոշյանի գործարանն իր աշխատակիցների մի մասին հարկադիր պարապուրդի է ուղարկել: Իհարկե, դա այս գործարանում պարբերաբար են անում՝ աշխատակիցներին ուղարկելով իրենց հաշվին չվճարվող արձակուրդ: Նրանց ասում են, որ արտահանման դժվարություններ կան, որոնք ազդում են ընկերության ֆինանսական վիճակի վրա, երբ վիճակը բարելավվի, հետ կկանչեն աշխատանքի:

«Հրապարակ»-ը կապվեց Պռոշյանի կոնյակի գործարանի ներկայացուցիչների հետ եւ հետաքրքրվեց՝ արդյոք այս պահին ճ՞ւս աշխատակիցներին հարկադրաբար ուղարկել են չվճարվող արձակուրդ: Մեր հարցին ի պատասխան, ընկերության հաշվապահությունից մի աշխատակից ասաց. «Դա թյուր ինֆորմացիա է, հնարավոր է՝ սեզոնին ինչ-որ աշխատակիցներ իրենք են գալիս ու իրենց հաշվին արձակուրդ վերցնում: Նման դեպք չի եղել, որ մենք խնդրենք աշխատակիցներին, որ իրենց հաշվին արձակուրդ վերցնեն»: Իսկ հարցին, թե արտահանումներ իրականացվո՞ւմ են այս պահին, ընկերությունն այժմ ի՞նչ դժվարությունների է բախվում, նշեցին. «Մենք կոնյակ արտահանել ենք, արտահանում ենք ու պիտի արտահանենք: Եղել են դժվարություններ, լրիվ փակ չի եղել: Խնդիրներ եղել են, կան ու կլինեն, մի քիչ՝ շատ, մի քիչ՝ քիչ»:

Այս պահին Պռոշյանի կոնյակի մուտքն արգելելու գործընթացն իրականացնող մարմինը Ռուսաստանի ալկոհոլի եւ ծխախոտի շուկան վերահսկող պետական մարմինն է՝ «Ռոսալկոգոլտաբակկոնտրոլը»: Այս կառույցը հաղորդել է, որ «չպլանավորված» ստուգում է իրականացրել՝ Ռուսաստան ներմուծվող կոնյակի նմուշների փորձաքննություն, եւ ստանդարտների կոպիտ խախտումներ է արձանագրել: Մեզ հետ զրուցած Պռոշյանի կոնյակի գործարանի աշխատակիցն անդրադարձավ նաեւ այդ հրապարակումներին. «Պռոշյանի գործարանն իր գործունեությունն իրականացնում է միջազգային չափանիշներին ու գործող օրենսդրությանը համապատասխան: Նշված հրապարակումները վերաբերում են բացառապես այդ ներմուծող ընկերության գործունեությանը եւ որեւէ առնչություն չունեն Հայաստանի Հանրապետությունում իրականացվող արտադրական գործընթացի հետ: Գործարանն աշխատում է բնականոն ռեժիմով, անխափան իրականացնում է արտադրություն, շարունակաբար արտահանում է իր արտադրանքը միջազգային շուկաներ, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ: Գործարանը պարբերաբար անցնում է միջազգային աուդիտներ ու ունի որակի կառավարման ու սննդամթերքի անվտանգության համապատասխան սերտիֆիկատներ»: Բանն այն է, որ Պռոշյանի գործարանը մասնաճյուղեր ունի Ռուսաստանում եւ Ուկրաինայում, հավանաբար, խոսքը վերաբերում է Ռուսաստանում գործող մասնաճյուղին, որին զրկել են լիցենզիայից, բայց դրա մայր գործարանը գտնվում է Հայաստանում:

**Արմինե ՆԱՎՈՅԱՆ**

## Ձյան հետեւանքով Դիլիջանում ո՛չ լույս կար, ո՛չ ջուր, ո՛չ գազ

Ապրիլի 12-ի երեկոյան տեղացած ձյունը Դիլիջան քաղաքի բնակիչների կյանքը լիովին խաթարել էր: Տեղացած ձյան հետեւանքով կոտրվել էին ծառերի ճյուղեր, շարքից դուրս էին եկել էլեկտրական հոսանքագծեր: Դիլիջանում տներ կային, որոնք, խմելու ջրից զատ, զրկված էին նաեւ էլեկտրական հոսանքից ու բնական գազից: Էլեկտրական հոսանքի գծերի վթարների հետեւանքով քաղաքը զրկվել էր պոմպերի միջոցով մղվող խմելու ջրից, որովհետեւ պոմպերն էլ են հոսանքով աշխատում: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքն ապրիլի 13-ին հայտարարություն էր տեղադրել. ««Վեոլիա ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության կողմից իրականացվող վթարավերացման աշխատանքներով պայմանավորված, ս.թ. ապրիլի 13-ին, ժամը 10:30-ից մինչեւ ապրիլի 14-ը, ժամը 10:30-ը կդադարեցվի Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի ջրամատակարարումը: Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը՝ պատճառված անհանգստության եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար»:

Տեղացած ձյան հետեւանքով Դիլիջանի որոշ թաղամասեր ապրիլի 13-ի ցերեկն էլ լույս չունեին եւ միայն այդ օրվա երեկոյան ժամերին են ունեցել, բնական գազն էլ մի քանի թաղամասերում շատ ցածր ճնշման է եղել: Այնպես որ, միայն Երեւանում չէ, որ տեղացած ձյունը կամ անձրեւը կաթվածահար է անում մայրաքաղաքի կյանքը, մարզերում էլ է նույն վիճակը:

# ԵՐԵՎԱՆԸ՝ ԹԶՈՒԿԻ ԳԼՈՒԽ, ՄԱՐԶԵՐԸ՝ ՄԱՐՄԻՆ

Հայաստանը նմանվել է թզուկի, որի գլուխը շատ մեծ է, մարմինը՝ փոքր: Երկրիս գլուխը մայրաքաղաք Երեւանն է, որտեղ կենտրոնացած է բնակչության գրեթե կեսը, արտադրական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական եւ այլ հիմարկների մեծամասնությունը: Երեւանում բնակչության կենտրոնանալու հետեւանքով «թզուկի» գլուխն այնքան է մեծացել, որ մարմինը ճկվել՝ գետնին է գլորվում: Հայաստանի ամեն իշխանություն բարձրագոչ հայտարարություններ է արել՝ մարզերի համաչափ զարգացման նպատակով մարզերում ենթակառուցվածքների բարելավման, ծրագրերի իրականացման մասին: Սակայն որտե՞ղ են այդ ծրագրերը, արդյունքը:

Սահմանամերձ գյուղերի տների լույսերից կարելի է գնահատել, թե որքան են արտաքին ու ներքին գաղթի հետեւանքները: Շատ տներում լույս չի վառվում, տներ էլ կան, որոնցում միայն ծեր ամուսիններ են մնացել կամ միայնակ, ծեր կենսաթոշակառուներ: Գյուղերում քիչ է երիտասարդությունը, հարսանիքներ քիչ են լինում, դպրոցներում աշակերտների թիվը տարեցտարի նվազում է: Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ 2025-2026 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտների թիվը 15 հազար 468 է: Տավուշի մարզպետարանի տվյալներով, 23 տարի առաջ՝ 2002-2003 ուսումնական տարում, Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում 21 հազար 896 աշակերտ էր սովորում: Անցած 23 տարում մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը նվազել է 6 հազար 428-ով: Հանրակրթական դպրոցների աշակերտների թվի նվազման հետեւանքով նվազել է նաեւ այդ դպրոցների շրջանավարտների թիվը:

Տավուշի մարզպետարանի տվյալներով, 2021-2022 ուստարում մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թիվը եղել է 1124, 2022-2023 ուստարում՝ 1040, 2023-2024 ուստարում՝ 984, իսկ այս տարի Տավուշի հանրակրթական դպրոցները կունենան ընդամենը 666 շրջանավարտ: Այսինքն՝ վերջին 4 տարում Տավուշի մարզի պետական հանրակրթական դպրոցների շրջանավարտների քանակը նվազել է 458-ով: Մարզում բնակչության վերաճ չկա, կամ այն փոքր է, արտագաղթն էլ ոչ մեծ տեմպով շարունակվում է: Ինչո՞ւ են բնակիչները հեռանում Տավուշից, հիմնականում՝ սահմանագոտուց: Որքան էլ Նիկոլ Փաշինյանը հայտարարի, թե Ադրբեջանի հետ խաղաղություն է հաստատվել, սահմանամերձ գոտու բնակիչները տեսնում են, որ խաղաղության պայմանագիր կնքված չէ, սահմանամերձ տարածքներն օկուպացված են, Տավուշի սահմանագոտուց հազարավոր հեկտարներ դեռեւս 1990-ական թվականներից գտնվում են Ադրբեջանի զինուժի վերահսկողության ներքո, 2024-ին Կիրանցի հողերն Ադրբեջանին հանձնելուց հետո սահմանազատման գործը կանգ է առել: Սակայն գաղթի հիմնական պատճառը դա չէ, մարդիկ արտագաղթում են հիմնականում մշտական զբաղվածություն, եկամտի կայուն աղբյուր չունենալու պատճառով: Տավուշից տղամարդիկ արտագնա աշխատանքի են մեկնում Ռուսաստան: 1-2 տարի այնտեղ սեզոնային աշխատանք կատարելուց հետո որոշում են իրենց ընտանիքներն էլ տեղափոխել այնտեղ, հիմնական բնակություն հաստատել: Նախկինում տավուշցիները հազվադեպ էին Ռուսաստանում հուղարկավորում իրենց ծնողներին, հանգուցյալներին հուղարկավորման համար տեղափոխում էին Հայաստան, իսկ այժմ ծնողներին Ռուսաստանում հուղարկավորելը սովորական երեւույթ է դարձել:

Օրինակ, Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղից գաղթածները Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաքում այնքան շատ են, որ նրանք այդ քաղաքը կատակով Նովի Ոսկեպար են կոչում: Բերդ համայնքի Մովսես եւ այլ բնակավայրերից վերաբնակները Մոսկվայում են հիմնավորվել: Ասում են, որ Մոսկվա քաղաքում ու Մոսկվայի մարզում սանտեխնիկայի վաճառքի 10 տոկոսը Բերդ համայնքից սերված գործարարներն են իրականացնում: Արտագաղթին ավելանում է ներքին տեղաշարժը: Գյուղերից եկած երիտասարդները Երեւանում լավ վարձատրվող աշխատանք են գտնում, հիպոթեքով բնակարան են գնում, իրենց տնեցիներին էլ աստիճանաբար տեղափոխում այնտեղ: Վերջին տարիներին համայնքներում սուբվենցիոն ծրագրերով ճանապարհներ են սալիկապատվել, ասֆալտապատվել, խմելու, ոռոգման ջրագծեր անցկացվել, սակայն բնակիչներին եկամտաբեր աշխատանք է հարկավոր: Անասնապահությունը եկամտաբեր չէ, եթե մեծ թվով անասուններ չեն պահում, հողագործությունը, այգեգործությունն էլ ապահովագրված չեն երաշտից ու կարկտահարությունից: Համայնքներից գաղթը կանխելու համար հարկավոր է պետական եւ այլ աջակցությամբ փոքր արտադրություններ ստեղծել գյուղերում, որը, սակայն, չի արվել ու չի արվում:

**Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ**

ՄԻՏՔԵՐ ԵՎ ԱԿՆԿԱԼՔ

# ՕՐԲԱՆՆ ԷԼ ԷՐ ԻՐ ԱԶԳԻՆ ՇԱՆՏԱԺ ԱՆՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ

Ապրիլի 12-ը երեւի ամենաերեւելի օրերից մեկն էր Հունգարիայի վերջին տասնամյակների պատմության մեջ: Ամբողջ գիշեր տոնախմբություն էր Բուդապեշտի փողոցներում՝ տոնում էին մեկ հաղթանակ եւ ձեռքբերում՝ Վիկտոր Օրբանի հեռացումն իշխանությունից: Օրբանին չփրկեցին ո՛չ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի դիրքավորումները, ո՛չ էլ ԱՄՆ եւ ՌԴ նախագահների հետ անձնական բարեկամությունն ու նրանց բացահայտ աջակցությունը:

Ընդսմին, Վիկտոր Օրբանի պարագայում դա իրական եւ գործնական բարեկամություն էր, ոչ թե Փաշինյանի նման՝ տեղեկատվական ձեռնածություններով ստեղծվող տպավորություն: Դիցուք, Թրամփը հազիվ թե գոնե մեկ անգամ Փաշինյանի անունը կամ ազգանունը հիշողությամբ արտասանած լինի կամ Փաշինյանին առհասարակ դեմքով ճանաչի: Մինչդեռ Օրբանի մասին Թրամփը խոսում էր եւ իր առաջին պաշտոնավարման ժամանակ, եւ Սպիտակ տնից հեռանալուց հետո, եւ այժմ: Ոչ միայն խոսում էր, այլեւ սկզբում Մարկո Ռուբիոյին, այնուհետ՝ Ջեյ Դի Վենսին անձնապես գործուղեց Հունգարիա՝ Վիկտոր Օրբանին հրապարակային աջակցություն հայտնելու: ՌԴ նախագահի հետ էլ Օրբանի հարաբերություններն այնքան փոխվստահելի եւ բարեկամական էին, որ Օրբանը գիշերուզօր Ուկրաինային տրամադրվող ռազմական, ֆինանսական եւ այլ աջակցությունները տորպեդահարելով էր զբաղված, զուգահեռաբար էլ՝ Պուտինին դիֆերամբներ ձոնելով:

Գումարած՝ Օրբանն էլ Փաշինյանի նման շանտաժի էր դիմում, թե իբր եթե իրեն վերստին չընտրեն, Հունգարիան կներքաշվի ուկրաինական պատերազմի մեջ: Դա բոլոր պրոռուսական գործիչների՝ հոգնեցնելու չափ ծանոթ հանկերգն է: Բայց դա էլ չօգնեց Օրբանին: Նրան հունգարացիները ոչ թե պարտության մատնեցին, այլ ուղղակի գրողի ծոցն ուղարկեցին՝ նրա մրցակից Պիտեր Մաջարին տալով սահմանադրական մեծամասնություն ապահովող քվեների քանակ: Օրբանն այնքան ու այնպես էր զզվեցրել ամենքին, որ ոչ մի աջակցություն ու շանտաժ նրան չփրկեցին:

Սակայն արդյո՞ք Օրբանն ավելի մերժելի եւ վնասարար մեկն էր, քան Նիկոլ Փաշինյանը: Անշուշտ՝ ոչ: Օրբանը, հաստատ, չէր հասել այնպիսի արհամարհվածության եւ արգահատանքի, որ սեփական երկրում, որտեղ փորձեր քաղաքացիների հետ շփվել, լեզվակռվի մեջ ընկներ, դիմացը կանգնած՝ թուքումուր տային, հետը բառ փոխանակել չցանկանային: Նման ողորմելի վիճակը սեփական երկրում ցանկացած ղեկավարի համար ազդանշան կլիներ, որ ինքն այլեւս կորցրել է ղեկավարի ընկալումը հասարակության մեջ եւ պետք է հեռանա: Սակայն Փաշինյանը մտավոր խնդիրների եւ հոգեկան անհավասարակշռության, թե մինչեւ ուղնուծուծը ահաբեկվածության պատճառով պատրաստ է ամեն թուքումուր կուլ տալ, արհամարհվել եւ նվաստանալ, այդ մերժումից գազազած ու չափը կորցրած՝ սրանրա ետեւից ընկնել, միայն թե իշխանության մնա, թիկնապահներով շրջապատվի եւ սեփական գոյությունը երաշխավորի:

Նույն գերխնդրին են ծառայում նաեւ Փաշինյանի եւ ուսապարկերի տեղեկատվական ձեռնածությունները, երբ փորձում են մոլորեցնելով հասարակության մոտ տպավորություն ստեղծել, թե Փաշինյանն Արեւմուտքի համար որեւէ նշանակություն ունի, կամ ԱՄՆ ծրագրերը Հայաստանի առնչությամբ կապ ունեն Փաշինյանի հետ, եւ այդպես շարունակ: Ընդ որում, այդ տեղեկատվական փուչիկը զգալիորեն արտածել են Ջեյ Դի Վենսի շատ տրամաբանական հայտարարությունից, թե ինքը ողջունում է Հայաստանի հարաբերությունների սերտացումն ԱՄՆ-ի հետ, ռազմավարական գործընկերության արդյունավետ առաջընթացը եւ կցանկանար, որ Հայաստանի պրոարեւմտյան քաղաքական ուղեգիծը շարունակվի: Սակայն ո՞վ է ասել, թե Հայաստանի պրոարեւմտյան կամ պրոամերիկյան քաղաքականությունը խարսխված է Փաշինյանի անձի կամ պաշտոնավարման վրա:

2022-ից, բայց հատկապես 2024-ից ի վեր, երբ Մերձավոր Արեւելքում եւ Արեւելյան Եվրոպայում ծավալվեցին ԱՄՆ-ի համար խիստ բարենպաստ զարգացումներ, ԱՄՆ-ն այլեւս բացահայտ ցույց է տալիս, որ Հայաստանում ունի լուրջ հետաքրքրություններ: Դրանք նույն այն հետաքրքրությունների ծիրում են, որոնցից ելնելով՝ հարյուր տարի առաջ դեռ Օսմանյան կայսրության կազմում գտնվող Հայաստանում ԱՄՆ-ն դիվանագիտական ներկայացուցչություն էր բացել եւ 1920-ի Վերսալյան վեհաժողովում Հայաստանի մանդատն էր ստանձնում:

Փաշինյանը խիստ մոլորության մեջ է, եթե կարծում է, թե իր անձը կամ Ադրբեջանի հետ խրտվիլակային խաղաղությունն այդտեղ դեր ունեն: Փաշինյանն ու իր խաղաղության մասին դատարկախոսությունները գրոշի արժեք չունեն ԱՄՆ-ի համար, արժեք եւ նշանակություն ունի Հայաստանը, եւ ով էլ ընտրվի ՀՀ հաջորդ խորհրդարանում, ով էլ ձեւավորի հաջորդ կառավարությունը, անպայման հաշվի է նստելու ԱՄՆ այդ շահերի եւ ծրագրերի հետ: Ընդսմին, Կրեմլը կամ ՌԴ նախագահն ԱՄՆ շահերին չեն ընդդիմանալու, ինչպես մինչեւ հիմա էության մեջ չեն ընդդիմացել, նախ՝ որովհետեւ դրա ուժը չունեն, երկրորդ՝ որովհետեւ ԱՄՆ-ի հետ համընկնող շահեր ունեն:

Այնպես որ, Փաշինյանը, ի տարբերություն Օրբանի, որեւէ ծանրակշիռ աջակցություն արտերկրից չունի, հասարակության մեջ առկա մտապատճեններն այդ առնչությամբ տեղեկատվական ձեռնածություններով գոյացրած փուչիկներ են: Սակայն այդ փուչիկներն ավելի եւ ավելի մեծ խնդիր են դառնում Արեւմուտքի համար: Փաշինյանը՝ չհասկանալով, թե դիտավորությամբ, ամեն ինչ անում է՝ առաջիկա խորհրդարանական ընտրություններում ոչ միայն Օրբանից էլ վատ ջախջախվելու, այլեւ, ինչը մտահոգիչ է, հասարակությանը «եվրոպական կողմնորոշումը՝ ընդդեմ ազգային ինքնության» դիլեմա պարտադրելու համար: ԵՄ-ն եւ ԱՄՆ-ն պետք է կամ Փաշինյանին կարգի հրավիրեն, որպեսզի նա հայկական ինքնության անկյունաքարերի՝ հայոց պատմության, լեզվի, Եկեղեցու դեմ բարբաջանքներն ու ոտնձգությունները դադարեցնի, կամ ընտրություններից առաջ Փաշինյանին խորհուրդ տան հեռանալ, որպեսզի Հայաստանի եվրոպական կողմնորոշումն ու ապագան Փաշինյանն իր անձով չվարկաբեկի եւ չվտանգի:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

# ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ԽԱՉԻ ՈՒ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ

Անվերջ կարելի է հիշել ու վերլուծել, թե ինչպես Նիկոլ Փաշինյանը պարտվեց Հայ առաքելական սուրբ եկեղեցու դեմ իր սանձազերծած կռվում: Պարտվեց ոչ միայն ճակատամարտի մակարդակում, այլեւ՝ ամբողջ պատերազմում: Նա անդադար ձեռնարկեց նորանոր հարձակումներ, եղավ կրեատիվ ու սպառնագին, կոտրեց տասնյակ հոգեւորականների հավատով կոփված կամքը: Թվաց, թե հաջողություն է գրանցելու, բայց՝ ոչ, դա խաբկանք էր: Ինքն էլ տեսավ, որ անգամ իր արշավներին պարբերաբար մասնակցող մարդիկ խորապես մերժում են այդ ձեռնարկը եւ չեն հարգում այդ ոճը: Տեսավ, համոզվեց, որ ընտրություններից առաջ ոչ մի լավ բան չի խոստանում այդ կեղծ պատարագների բեմադրությունը, ու լուռ հետ քաշվեց, անշշուկ նահանջեց ու սառեցրեց թեման մինչեւ ընտրությունների ավարտը: Սա ամենեւին չի նշանակում, թե հավատավոր համայնքը կարող է հանգիստ շունչ քաշել, մտածել, որ մեր չարչարված նյարդերը բաց են թողնելու, մեր սրբություններին չեն բռնանալու, թույլ են տալու՝ այս մասով պահպանենք մեր հին պատմությունը, մեր հին տեսակը՝ իրենց համար ոչ իրական, մեզ համար իսկական մեր էությունը.... Բայց այդպես մտածողները խորապես հիասթափվելու են:

Զգոնությունը թուլացնելու կարիք չկա: Նա անպատճառ վերադառնալու է այս հարցին, ընդամենը մոտ երկու ամիս անց նա գալու է երկրի փոքրամասնությունից ստացած քվեով ու հայտարարելու է, որ ունի մանդատ՝ Հայ առաքելական եկեղեցին իր ճաշակով «բարեփոխելու» համար: Դա կլինի այն դեպքում, եթե մեծամասնությունը, այնուամենայնիվ, նախընտրի մնալ տանը՝ ընտրությունների օրն այդ բացակա կեցվածքով՝ իր անհամաձայնությունն ու դժգոհությունը հայտնելու ընդդիմադիր բոլոր ուժերին: Հետո նրանք՝ այդ հիասթափված մեծամասնությունը, կտեսնի համառ ու ագրեսիվ փոքրամասնության հաղթանակի խրախճանքը ու դառնորեն կհասկանա, որ քվեարկեց ընդդեմ ողջախոհության, ընդդեմ հայրենասիրության, ընդդեմ մեր հավատքի, մեր հայրերի հիշատակի, այդպես քվեարկեց՝ անուղղակի, քվեարկությանը չմասնակցելու իր որոշմամբ: Այդ որոշմամբ թույլ տվեց «բարեփոխել» Եկեղեցին, այնպես, ինչպես տենչում են թե՛ Փաշինյանը, թե՛ Փաշազադեն միաժամանակ:

Պետք է չկասկածել, որ հաղթանակի դեպքում Փաշինյանը, անկասկած, կունենա ցանկություն եւ կունենա արդեն նաեւ հնարավորություն՝ Եկեղեցու դեմ պայքարն իր համար ցանկալի ելքով ավարտելու համար: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը նախընտրական ծրագրում հիշատակել է եկեղեցու եւ կաթողիկոսի հարցը, որպեսզի ընտրություններում հաջողություն գրանցելու հաջորդ իսկ օրը կարողանա անցնել այդ ծրագրի իրագործմանը՝ լիովին դրա իրավունքն ունենալով: Սեւով սպիտակի վրա գրել-գրանցել են այդ նպատակը, թեեւ իրենց ընտրազանգվածի գերակշիռ մեծամասնությունն այդ ծրագիրը չի կարդալու: Այդ ընտրողները նախ ոչինչ չունեն ճշտելու, հասկանալու, իմանալու, նրանք գիտեն, որ ընտրելու են Նիկոլ Փաշինյանին՝ անկախ նրանից, թե ինչ է գրված այդ ծրագրում: Երկրորդը. ելնելով նրանց արտաքին տվյալներից, կարելի է եզրահանգել, որ շատերն անգամ չեն էլ կարողանա կարդալ, որ մի բան էլ նեղվեն Հայ առաքելական եկեղեցու դեմ սպասվող պայքարի հանգամանքից: Այնպես որ, մարտավարական իմաստով Եկեղեցու դեմ պայքարը սառեցնել արժեր, քանի որ այդ գործողությունը համակրանք չվայելեց, իսկ ռազմավարական իմաստով՝ ծրագրում այն ներառել նույնպես արժեր, քանի որ այդպիսով վաղվա հարձակումները Եկեղեցու դեմ ու բռնաճնշումները հոգեւորականների նկատմամբ փաստաթղթավորված են եւ սպասում են լեգիտիմացման:

Ահա եւ խոսք ունեն ասելու եւ ձայն ունեն քվեարկելու մարդիկ, ովքեր անհանդուրժելի գնահատեցին Եկեղեցու նկատմամբ «Քաղաքացիական պայմանագրի» վերաբերմունքը, եթե անգամ ընդդիմադիր ուժերից որեւէ մեկին չեն համակրում, միեւնույն է, հանուն հավատքի ու եկեղեցու, հանուն իրենց խաչի ու մկրտության, հանուն հայի պատմության ու հիշողության, հանուն Աստծո սիրո, պիտի գնան ընտրության, քանի որ այդ օրը կարող են պաշտպանել իրենց համար թանկ այդ ամենը՝ միայն քվեարկությամբ:



Շաքե ԱՎՈՅԱՆ

ՀՈՐՄՈՒԶ

# ԱՇԽԱՐՀԻ ՆՈՐ «ԿՌՎԱԽՆՁՈՐԸ»

Պակիստանում Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ կայացած առաջին բանակցությունները, մեծ հաշվով, անարդյունք ավարտվեցին, իսկ Վաշինգտոնը որոշեց արգելափակել Հորմուզի նեղուցը: Թեման վերջին ժամերին դարձել է միջազգային մասմեդիայի եւ հանրության ամենաակտիվ քննարկվող թեմաներից մեկը՝ հաշվի առնելով Հորմուզի նեղուցի համաշխարհային նշանակությունը, նավթի գների հետ կապված անկայուն իրավիճակը, մի շարք երկրների տնտեսությանը սպառնացող ռիսկերն ու այլ մարտահրավերները:

Մերձավոր Արեւելքում հակամարտության վերջին սրացումը աշխարհը դնում է մեծ ճգնաժամի եզրին: Հորմուզի նեղուցի՝ համաշխարհային էներգիայի հիմնական զարկերակի փակումից հետո տարածաշրջանում լարվածությունը հասել է աննախադեպ մակարդակի: Թեպետ Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ ապրիլի 11-ին Իսլամաբադում կայացած առաջին բանակցություններից հետո նախագահ Թրամփը պնդեց, թե խնդրահարույց հարցերի մեծ մասը լուծվել է, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ԱՄՆ առաջնորդը չափազանց դժգոհ է Իրանի գործողություններից: Մասնավորապես, նա նշել է, որ ԻԻՀ իշխանությունները շանտաժով են զբաղված՝ նեղուցն ականապատելով եւ վճարներ գանձելով, իսկ Միացյալ Նահանգները թույլ չի տա, որ իրեն շանտաժի ենթարկեն: Ավելին, Վաշինգտոնը չի կարողացել համաձայնության գալ Թեհրանի հետ իրանական միջուկային ծրագրի վերաբերյալ: Արդյունքում, իր սպառնալիքի մարտավարությամբ հայտնի ԱՄՆ նախագահն ապրիլի 12-ին հայտարարեց, որ մոտ ապագայում Միացյալ Նահանգները, այլ երկրների օգնությամբ, կկանխի ցանկացած նավի անցումը Հորմուզի նեղուցով, ինչպես նաեւ կփնտրի եւ կկալանի այն նավերը, որոնք վճարել են Իրանին՝ տարանցման համար:

Գլոբալ ռիսկեր: Որո՞նք են այս հակամարտության երկարաժամկետ հետեւանքները նավթի շուկայի եւ աշխարհի համար: Որքանո՞վ են իրատեսական Պարսից ծոցի երկրների կողմից քննարկվող՝ Հորմուզի նեղուցը շրջանցող խողովակաշարեր կառուցելու ծրագրերը: Կարո՞ղ ենք ասել, որ այլընտրանքային էներգիայի աղբյուրների ակտիվ զարգացումը կվերսկսվի: Հիմնական գլոբալ ռիսկը, նեղուցի երկարատեւ փակման ամենանակնհայտ հետեւանքը, շատ փորձագետների կարծիքով, նավթի եւ էներգակիրների գների աճն է: Սա իր հերթին կհանգեցնի զարգացած երկրներում արագացված գնաճի՝ մեծացնելով համաշխարհային տնտեսական անկման եւ պարենային ճգնաժամի ռիսկը: Փաստ է, որ Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակը փոթորիկ է առաջացնում համաշխարհային շուկաներում՝ Իրան-ԱՄՆ շարունակվող տարաձայնությունների եւ Հորմուզի նեղուցի հետ կապված վերջին զարգացումների պայմաններում:

«Իրանական պորտֆել». ինչպե՞ս շահույթ ստանալ աշխարհաքաղաքականությունից: Վաշինգտոնը եւ Թեհրանը շարունակում են պայքարել Հորմուզի նեղուցի վերահսկողության համար, իսկ հակամարտող կողմերի միջեւ բանակցությունների հաջորդ փուլը դեռեւս անհայտ է: Axios-ը, հղում անելով տեղեկացված աղբյուրներին, հաղորդում է, որ միջնորդներ Պակիստանը եւ Թուրքիան փորձում են կազմակերպել նոր փուլ, մինչեւ հրադադարի ավարտը (ապրիլի 21-ին): Այնուամենայնիվ, զարգացումները դժվար է կանխատեսել: Axios-ի աղբյուրները նշում են, որ Թրամփը չի բացառում ռազմական գործողությունների վերսկսումը, եթե Հորմուզի նեղուցի ամերիկյան շրջափակումը չստիպի Իրանին փոխել ուղղությունը: Garda Capital-ի ներդրումային ռազմավար Ալեքսանդր Բախտինի խոսքով, նույնիսկ եթե հակամարտությունն ամբողջությամբ ավարտվի մոտ ապագայում, շուկայի մասնակիցները դեռ ստիպված կլինեն գործողությունների սցենար մշակել՝ նեղուցի փակման հետ կապված: «Սա բարձրացնում է վառելիքի վերջնական արժեքը համաշխարհային շուկաներում, բարձրացնում է գնաճը, ճնշում է գործադրում տոկոսադրույքների վրա եւ ընդհանուր առմամբ նվազեցնում է համաշխարհային տնտեսական աճի ներուժը: Հակամարտության հիմնական հետեւանքը նավթի գների երկարաժամկետ ռիսկի պարգեւավճարն է»,- ընդգծում է նա:

Freedom Finance Global-ի վերլուծաբան Վլադիմիր Չերնովը նույնպես նշում է, որ նավթի վրա հիմնական երկարաժամկետ ազդեցությունը մշտական աշխարհաքաղաքական գնային պարգեւավճարն է: «Հորմուզը մնում է համաշխարհային շուկայի հիմնական հանգույցը. 2025 թվականի առաջին կեսին նեղուցով օրական անցել են 20.9 միլիոն բարել նավթ եւ նավթամթերք կամ համաշխարհային հեղուկ ածխաջրածնի սպառման մոտավորապես 20%-ը: Ավելին, նեղուցով օրական անցել է 11.4 միլիարդ խորանարդ ոտնաչափ հեղուկացված բնական գազ (ՀԲԳ) կամ համաշխարհային ՀԲԳ առեւտրի ավելի քան 20%-ը: Հետեւաբար, նույնիսկ անցուղու մասնակի խափանումն անմիջապես ազդում է ոչ միայն նավթի, այլեւ գազի, բեռնափոխադրումների, ապահովագրության եւ ամբողջ ասիական մատակարարման շղթայի վրա»,- նշում է փորձագետը:

Շրջանցիկ ճանապարհներ: Ըստ Financial Times-ի՝ Պարսից ծոցի երկրներն ուսումնասիրում են նեղուցը շրջանցող նոր խողովակաշարերի կառուցման հնարավորությունը, քանի որ դրա նկատմամբ Իրանի երկարաժամկետ վերահսկողությունը որպես սպառնալիք է ընկալվում: Ըստ FT-ի՝ քննարկվում է Արեւելք-Արեւմուտք խողովակաշարի հզորությունների հետագա ընդլայնումը կամ նոր երթուղիների կառուցումը: Հնարավոր տարբերակներից մեկը Հնդկաստանից Պարսից ծոցի միջով դեպի Եվրոպա միջանցք կառուցելու ամերիկյան նախագծի (IMEC) վերակենդանացումն է: Ըստ փորձագետների՝ եվրոպական տարածաշրջանում խոսվում է միջուկային էներգիայի զարգացման մասին, սակայն նման սցենարի իրականացումը, այդ թվում՝ Հորմուզի նեղուցը կամ այլ կարեւոր տրանսպորտային ուղիները շրջանցող նոր խողովակաշարերի կառուցումը, ցանկացած դեպքում, կպահանջի զգալի ժամանակ: Համաշխարհային նավթի շուկան կարող է առնվազն մի քանի ամիս բախվել մատակարարման սահմանափակման, այդ թվում՝ Մերձավոր Արեւելքում նավթային օբյեկտների վնասման եւ դրանք վերականգնելու անհրաժեշտության պատճառով: Հետեւաբար, այս հակամարտության ամենաերկարատեւ ազդեցությունը ոչ թե գների միանվագ աճն է, այլ նավթի, գազի, նավագնացության եւ համաշխարհային գնաճի նոր, մշտական ռիսկը: Նույնիսկ եթե ռազմական հակամարտությունը դադարի, շուկան արդեն հասկացել է, որ Հորմուզը կարող է կաթվածահար լինել, եւ արագ փոխարինում չկա: Հետեւաբար, այս պատերազմից հետո աշխարհը, հավանաբար, ավելի շատ կծախսի երթուղիների ռազմական պաշտպանության, պահեստային խողովակաշարերի եւ մաքուր էներգիայի վրա:

**Արա ԱԼՈՅԱՆ**

# ՀՈՂԻ ՎԵՃ, ՄԱՀԱՓՈՐՁ ՈՒ ԵՐԿԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Այունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում շարունակվում է Տաթեւի նախկին վարչական ղեկավար Գոռ Մինասյանի քրեական վարույթով դատաքննությունը: Բացի վարչական ղեկավարից, մեղադրյալի աթոռին է եւս մեկ անձ՝ Գեւորգ Հարությունյանը: Գոռ Մինասյանն անցնում է 2 քրեական գործով. նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 264-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով ու 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, այն է՝ նա խուլիգանական դրդումներով վնասել է Մարո Մարտիրոսյանի գույքը, Գեւորգ Հարությունյանի հետ կատարել է խուլիգանություն, եւ Մարտիրոսյանի առողջությանը վնաս են պատճառել:

Մյուս քրեական գործով Գոռ Մինասյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մի խումբ անձանց կողմից ապօրինաբար կազմակերպել եւ ղեկավարել է Մարո Մարտիրոսյանի եղբոր՝ Կարո Մարտիրոսյանի սպանությունը, նրան կյանքից զրկելու դիտավորությամբ, սակայն այն իր կամքից անկախ հանգամանքներում չի իրագործվել:

Մեր տեղեկություններով, Մարտիրոսյանների ընտանիքի եւ Գոռ Մինասյանի կոնֆլիկտը տարիների պատմություն ունի: Մարտիրոսյանները Տաթեւ համայնքում 2010 թվականին հողամաս են ձեռք բերել եւ գործունեություն ծավալել: Գոռ Մինասյանը, լինելով Տաթեւ համայնքի վարչական ղեկավարը, Մարտիրոսյանների ընտանիքին սեփականություն իրավունքով պատկանող հողամասը 2018-ին կրկին աճուրդի է դրել եւ աճուրդով գնել: Կարո Մարտիրոսյանի հայրը՝ Վարուժան Մարտիրոսյանը, դատարան է դիմել՝ պահանջելով իր գույքը:

Կարո Մարտիրոսյանի պաշտպան **Ավետիք Կարապետյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ դատական գործը նախնական դատալսումների փուլում է, դատավոր Գոռ Գասպարյանն ինքնաբացարկ է հայտնել. «Քննվում է Մարո Մարտիրոսյանի, այսինքն՝ Կարո Մարտիրոսյանի քրոջ վերաբերյալ գործը, որով Մարո Մարտիրոսյանը տուժողի կարգավիճակ ունի, իսկ մեղադրյալի կարգավիճակ ունեն Գոռ Մինասյանը եւ նրա աշխատող Գեւորգ Հարությունյանը: Կարո Մարտիրոսյանի գործով Գոռ Մինասյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ կազմակերպել եւ ղեկավարել է Կարո Մարտիրոսյանի սպանությունը, եւ նշված գործով նաեւ մեղադրանք է առաջադրվել Գոռ Մինասյանի 2 եղբայրներին՝ Գուժ եւ Զարզանդ Մինասյաններին, ինչպես նաեւ՝ դրանց հետ ազգակցական, ընկերական հարաբերությունների մեջ գտնվող մի քանի անձանց: Որոշակի փաստական առումով Գոռ Մինասյանի եղբայր Զարզանդ Մինասյանն իրեն մեղավոր է ճանաչել, մնացած մեղադրյալները դեպքի կապակցությամբ հերքել են իրենց մասնակցությունը: Մարո Մարտիրոսյանի գործով Գոռ Մինասյանի նկատմամբ կիրառվել է վարչական հսկողություն, իսկ Կարո Մարտիրոսյանի վերաբերյալ խափանման միջոց կիրառված չէ: Մասնավորապես՝ իրավական խնդիր է, երբ անձը մեղադրվում է առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ, բայց իր նկատմամբ խափանման միջոց կիրառված չէ»:

Կարապետյանը ներկայացրեց նաեւ վեճի նախապատմությունը. «Կարո Մարտիրոսյանը նշել է, որ հողային խնդիր են ունեցել դեռեւս 2018 թվականին, եւ այդ խնդիրը եւ՛ իրավական, եւ՛ բարոյական առումով է շարունակվել, մասնավորապես՝ Կարո Մարտիրոսյանը եւ նրա ընտանիքի անդամները Գոռ Մինասյանի եւ նրա ընտանիքի անդամների վերաբերյալ արատավոր տեղեկություններ են տարածել, եւ դա է դրդապատճառ հանդիսացել: 2018 թվականի հողային խնդիր կա Մարտիրոսյանների ընտանիքի եւ Գոռ Մինասյանի միջեւ, որը հետագայում շարունակվել է դատարանում՝ մի քանի հայցեր են ներկայացված: Կարո Մարտիրոսյանին փորձել են սպանել, իսկ Մարո Մարտիրոսյանին նույն օրը՝ առավոտյան, մարմնական վնասվածքներ են պատճառել, ֆիզիկական ներգործություն, ինչպես նաեւ՝ մեղադրանք կա Գոռ Մինասյանի գույքը դիտավորությամբ վնասելու եւ խուլիգանություն կատարելու վերաբերյալ»: Մեղադրյալ Գոռ Մինասյանի պաշտպան Սլավիկ Պողոսյանը մեր հարցերին չպատասխանեց՝ ասելով, որ քրեական գործերի շրջանակներում այս պահին զերծ կմնա որեւէ մեկնաբանություն անելուց:

**Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

# ԽՆԴԻՐՆ ԱՅՆ Է, ՈՐ ՉԱՐԺԵՔԸ ՀԱՐԱԿՎԵԼ Է ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎՐԱ

*Հարցազրույց երգիչ, հայ ժողովրդական երգերի մեկնաբան, Հայաստանի վաստակավոր արտիստ **Մրոյի (Արսեն Գրիգորյան)** հետ*

**- Անդրադառնանք հոգեւորի, մշակույթի կարեւորությանը՝ մշակույթը ձո՞ւ է, թե՞ բովանդակություն եւ անհրաժեշտություն: Հեռու չգնալու համար՝ Ձեր գործունեության օրինակով:**

- Ես իմ կյանքում ինչ արել եմ, անհրաժեշտությունից ելնելով եմ արել: Այդպես 1987-ին Սիրիայից վերադարձել եմ Հայաստան, հաջորդ տարի արդեն մասնակցել եմ Արցախյան շարժմանը: Ես Սիրիայում սիրել եմ Հայաստանը՝ չճանաչելով, այդ սերն ինձ բերեց Հայաստան, որպեսզի ճանաչեմ: Ես ունեմ երկու վարպետ՝ Հովհաննես Բադալյանը եւ Հայրիկ Մուրադյանը, ինչպես երգարվեստում, այնպես էլ կյանքում: Այդպես սկսեցի մեր ավանդական եւ աշուղական երգերից, նաեւ մեր կոմպոզիտորների երգարվեստից ժամանակակից մշակումներ անել, որպեսզի երիտասարդությունը կարողանա նորովի մատուցել դրանք, որոնք այնքան էլ տարածված չէին: Եվ 1996թ. հրատարակեցի «Մրո» ալբոմը, որտեղ Հայաստանի տարբեր տարածքները ներկայացնող երգեր են զետեղված՝ նոր գործիքավորմամբ եւ ժամանակի շնչով, սակայն չվնասելով երգի բուն էությունը: Այդպես՝ անհրաժեշտությունից ելնելով, 2014թ. հիմնեցի «Գութան» հայ ազգագրական երգի-պարի փառատոնը: Եվ այսօր «Գութան»-ին մասնակցում են արդեն 22-23 ազգագրական խմբեր Հայաստանից ու սփյուռքից՝ ներկայացնելով ամբողջ Հայաստանի մշակութային քարտեզը: Այդպես 2017թ. ստեղծեցի «Արար» հայ արվեստի պահպանման կենտրոնը, որի նպատակն է ոչ մշակութային ժառանգությունը պահպանելը եւ տարածելը: Բերդավանից ենք սկսել, եթե սկզբում ունեինք 2-3, ապա այսօր ունենք արդեն 23 կենտրոն, որոնք տարածված են Հայաստանի 9 մարզում, եւ դրանցից օգտվում են 48 բնակավայրի երեխաներ ու մեծեր՝ անվճար: Մի տեղ սովորեցնում ենք խաչքարագործություն, մի տեղ՝ ասեղնագործություն, մեկ այլ տեղ՝ կարպետագործություն, դարբնություն, փայտի գեղարվեստական մշակում, խեցեգործություն եւ ազգային արվեստի այլ ճյուղեր: Մենք այս 9 տարվա ընթացքում ունեցել ենք 10 հազար շահառու: Այս պահին ունենք 1083 երեխա եւ մեծ: Ինչո՞ւ անվճար՝ որովհետեւ ես հավատում եմ, որ սա զինվորագրում է, իսկ զինվորից գումար վերցնելը մեղք է:

**- Եկանք հասանք մի ժամանակի, երբ ներսից վտանգված են մեր հոգեւոր կյանքը, մշակութային տարածքը, ինքնությունը: Ամեն օր, որպես պետական քաղաքականություն, քարոզվում է հրաժարվել, ուրանալ, մոռանալ պատմությունը, արժեքները, սրբությունները: Այդ թվում է նաեւ տասնամյակների Ձեր գործունեությունը: Դուք սխա՞լ ճանապարհ եք անցել:**

- Պատերազմ է հայտարարված մեր ինքնության դեմ եւ շարունակվում է: Ինքնության պաշտպանությունը յուրաքանչյուրիս ամենօրյա պարտքն է: Այո, հասել ենք այնպիսի ժամանակի, որ ինքնության դեմ է պատերազմը: Իսկ «իրական Հայաստան, ոչ իրական Հայաստան»՝ շինծու, արհեստածին հասկացություն է: Ես իմ հայրենիքի տերն եմ, իմ պետականության տերն եմ. մեկը մյուսին չի հակասում: Եթե ես դրանք դնում եմ հակադրության մեջ, ապա առաջին հերթին հրաժարվում եմ իմ ինքնությունից, ոչ թե տարածքից. այստեղ տարածքի խնդիր չկա: Մենք միշտ ասում ենք՝ մեր ֆիզիկական խրամատները պահենք, իսկ մեր հոգեւոր եւ մշակութային խրամմ՞տը ոնց ենք պահելու: Դրա մասին ո՞վ է մտածելու: Մոռանալը թուրքական թեզ է, որը հատուկ օրակարգով տարածվում է հայ հասարակության մեջ, եւ շատերը, չգիտակցելով դա, խաբված, մոլորված են, ասելով՝ լավ, միայն թե հանգիստ ապրենք: Հանգիստ ապրելն առանց արժանապատվության՝ անիմաստ է: Եթե մտածենք միայն հանգիստ ապրելու մասին, կարող ենք գնալ Ավստրալիա, Շվեդիա, եւ գնում են: Բայց ես եկա եւ մնում եմ: Որովհետեւ ուզում եմ տեր կանգնել իմ արժանապատվությանը:

**- Բայց այդ արժանապատվության սյուները հերթով ընկնում են, որոնք մեր ինքնության առաստաղն են պահում: Դուք տեսնո՞ւմ եք այդ կորստյան վտանգը:**

- Անշուշտ, տեսնում եմ: Մեր ինքնության կարեւոր բաղադրիչ դարձած Առաքելական սուրբ եկեղեցին հարձակման տակ է: Եվ ո՞վ է պաշտպանելու: Այսինքն, մենք այսօր մեր Եկեղեցու հանդեպ դառնում ենք ուրացող: Դարեր շարունակ չունենալով պետական համակարգ՝ մեր Եկեղեցին մեզ պահել է մեր ինքնության մեջ, տեր է կանգնել եւ այն հասցրել է մեզ: Եվ այսօր հարձակվել այդ Եկեղեցու վրա, մարդկային առումով առնվազն ուրանալ է: Նույնիսկ խորհրդային տարիներին, որ աթեիստական համակարգ էր, այս ձեւով չէին կպնում ինքնությանը: Ճիշտ է, եկեղեցիներ են քանդել, բայց ժողովրդի հոգու եկեղեցուն չեն կպել:

**- Իսկ ինչպե՞ս են վարվում ցեղասպանության հիշողության հետ. Դուք մազապուրծի ժառանգ եք: Արդյո՞ք մոռացումը չի նշանակում արժանապատվությունից զուրկ լինել, երբ ցեղասպանողը չի զղջացել, ներողություն չի խնդրել, իսկ մենք գրկաբաց գնում ենք դեպի իրեն: Կանաչ լույս չե՞նք վառում՝ նույնը կրկնելու, ինչպես Արցախում:**

- Ցեղասպանության հետ վարվում են այնպես, ինչպես թուրքը կվարվեր: Այսօր այս իշխանությունն այնպես է վարվում, ինչպես թուրքը կուզեներ, բայց չէր կարողանա: Երբ մարդը հրաժարվում է իր իրավունքներից, չի պայքարում, շատերս նայում ենք նրան եւ համարում, որ արժանապատվության հետ խնդիր ունի: Ես վստահ եմ, որ իրենք չեն կարողանալու մոռացնել կամ ջնջել պատմական հիշողությունը: Այստեղ խոսքն ազգային եւ հավաքական իրավունքների մասին է. հավաքական խնդիր կա, ոչ միայն անձնական: Այսինքն՝ ո՞վ ես դու, որ որոշես, որ մենք պետք է հրաժարվենք այդ իրավունքի համար պայքարելուց: Ո՞վ ես. այսօր տնօրեն ես, վաղը տնօրեն չես: Խնդիրն այն չէ, որ մենք այսօր ունենք անհաջող իշխանություն, խնդիրն այն է, որ մենք մեր իշխանությունը չունենք: Եվ խնդիրն այն չէ, որ արժեքների բախում է այսօր այստեղ, խնդիրն այն է, որ չարժեքը հարձակվել է արժեքների վրա: Այսինքն, չարժեքն ուզում է մեր բոլոր արժեքները ոչնչացնել, որ մենք առանց արժեքների ապրենք եւ դոնդողի նման այս ու այն կողմ անենք: Դրա համար յուրաքանչյուրիս դերը շատ կարեւոր է: Ինչո՞ւ են մարդիկ մեր չակերտավոր մտավորականների մասին վերապահումով արտահայտվում՝ որովհետեւ մտավորականի ցուցիչը պայքարելն է: Մտավորականն այն չէ, որ մի քանի գիրք է կարդացել, մեկ կամ մի քանի համալսարան է ավարտել եւ դարձել է գրող, կոմպոզիտոր կամ մեծանուն բժիշկ, լեզուներ գիտի, բայց չի պայքարում: Եթե չի պայքարում, ինքը չի կարող լինել մտավորական: Մտավորականը նա է, որն ընդհանրական շահի համար է պայքարում, ոչ թե անձնական: Եվ մեր խնդիրը հենց այստեղ է: Շատերն իրենց մի կողմ են քաշել, ասում են, թե սա աշխարհաքաղաքական խնդիր է, մենք ի՞նչ կարող ենք անել: Ո՞նց թե՝ ինչ կարող եմ անել: Այդքան արժեքներ է ստեղծել իմ ժողովուրդը, եթե այդպես չմտածեմ, չպահպանեմ մեր ինքնությունն ու իրավունքները, ուրեմն խնդիր ունեմ, պետականություն ունենալու արժանի չեմ ես:

**- Դուք Սիրիայից եք տեղափոխվել Հայաստան: Այսօր սփյուռքի եւ հայրենիքի միջեւ անջրպետ կա, կարծես: Չե՞ք կարծում, որ սա նույնպես մեր ինքնության առաստաղը պահող սյուներից մեկի անկումն է:**

- Պետության քաղաքականության եւ ռազմավարության մեջ կարեւոր դեր պետք է ունենար հայրենադարձությունը, որի շնորհիվ մենք կամրացնեինք մեր պետությունը: Սա իմ պատկերացումը եւ տեսլականն է, որովհետեւ դու մարդուժ կարող ես բերել, գիտուժ եւ ֆինանս: Եվ մենք այսօր այստեղ կլինեինք 7 կամ 5 միլիոն հայեր: Տալով արտոնություններ՝ հարկերի եւ այլնի տեսքով, քաջալերելով, խրախուսելով հայրենադարձությունը՝ նոր թաղամասեր կկառուցվեին եւ քաղաքներ: Էլի սփյուռքը մնալու էր, բայց կունենայինք հզորացած Հայաստան՝ հայերով: Բայց մենք չգնացինք այդ ճանապարհով: Հենց սկզբից պետք է լիներ ոչ թե սփյուռքի նախարարություն, այլ՝ հայրենադարձության նախարարություն: Եղել են տարբեր ծրագրեր, բայց ո՛չ ռազմավարություն: Եվ այսօր մենք հասանք ինչի՞ն, նույնիսկ այդ նախարարությունը չկա: Սա էլ է ինքնության դեմ հարված: Ես առանձնապես քաղաքական միտք չունեմ եւ խոսույթ չունեմ, բայց, իմ պատկերացմամբ, այսօր ամբողջը պտտվում է ինքնության թուլացման եւ ոչնչացման ծրագրի շուրջ:

**- Եկավ մի սերունդ, որն Արցախն ազատագրեց, եւ եկավ մի սերունդ, որն Արցախը հանձնեց: Այսինքն, հայրերն ազատագրեցին, որդիները հանձնեցին: Հերոսներից դավաճանն՞ր ծնվեցին:**

- Մենք ինչո՞ւ ենք ասում՝ մութ ու ցուրտ տարիներ, ինչո՞ւ երբեք չենք ասել՝ հաղթանակի տարիներ: Ինչո՞ւ չամրագրեցինք մեր հաղթանակը: Մենք չկարողացանք մեր հաղթանակին տեր կանգնել եւ մսխեցինք: Մենք ի՞նչ արեցինք: Պատմության մեջ եկանք մի տեղ, որ այդ ցեղասպանված, խեղճացած, ցիրուցան եղած ժողովուրդը փորձեց պատմական արդարությունը վերականգնել՝ Արցախն ազատագրելով, միավորվել, միասնական լինել՝ Հայաստան եւ սփյուռք: Բայց մենք այսօր հասանք մի հանգրվանի, որ քո ինքնությունը թուլացնում են՝ հաղթողից վերածելով պարտվողի: Եվ այդ արվում է դրսի ուժերի թելադրանքով ու միջամտությամբ: Մեր թշնամիները կերազեին այն վիճակը, որի մեջ մենք հայտնվել ենք այսօր: Ես չեմ մեղադրում ամբողջ ժողովրդին, բայց գտնում եմ, որ կա մի հատված, որը մոլորության մեջ է: Մենք չպետք է իրենց հայհոյենք, պետք է հնարավորություն տանք: Եվ մենք, հատկապես արվեստագետները, մշակույթի մարդիկ, որ համարվում են մի քիչ վեր կանգնած, պետք է սեր տարածեն, աստվածային սեր: Այնպես, որ մարդիկ մտածեն՝ եթե ատելություն կա իրենց մեջ, ուրեմն նշանակում է, որ Աստծուց հեռացել են:

**- Այս ընթացքով ո՞ւր ենք գնում, արդյո՞ք ճիշտ ենք գնում, եթե սխալ ենք գնում, ապա ի՞նչ պետք է անենք, որ կայուն հանգրվանի հասնենք, կամ գուցե հասնե՞լ ենք, եւ սա՞ է ճիշտ ընթացքը:**

- Մեզ անհրաժեշտ է, անկախ ամեն ինչից, ունենալ ազգային իշխանություն: Շատերն սկսում են փիլիսոփայել, թե ինչ է նշանակում ազգային իշխանություն: Այդտեղ փիլիսոփայելու բան չկա: Կա ինքնություն, մենք ունենք մեր ինքնությունը, Աստված մեզ ստեղծել է այսպես: Եվ մեր պետությունը, որպես համակարգ, պետք է տեր կանգնի մեր ինքնությանը: Այսինքն, պետության մեջ պետք է ազգային շահի եւ պետական շահի գերակայություն լինի: Պետք է ունենանք արժանապատիվ կյանք հենց այստեղ, հակառակ դեպքում կարող ենք ցանկացած տեղ ապրել: Պետք է պետությունը սիրել եւ ժողովրդին սիրել: Մենք այդ խնդիրն ունենք: Այս իշխանությունն արդեն մեզ չի սիրում, ոչ էլ պետությունն է սիրում: Ո՞վ է հեշտությամբ ասում՝ դե լավ, որ թշնամին մտել է մեր սահմաններից ներս, ոչինչ՝ միայն չսիրողը: Ո՞վ է հեշտությամբ ասում՝ այս հոգեւորականներն այսպես, այնպես, ո՞վ է այդ տոնով խոսում՝ չսիրողը: Ո՞վ է մուննաթ գալիս ժողովրդի վրա՝ չսիրողը: Սեր է պետք, ամեն ինչի բանալին սիրո մեջ է: Պետք է ունենանք իշխանություն՝ ազգային մտածողությամբ, ազգային հավատամքով: Եվ այնպես պետք է համակարգվի, որ պետության մեջ յուրաքանչյուր ոլորտ աշխատի նպատակային, լինի նպատակի ձեւավորում, որը հիմա չկա: Բայց ես մեծ հույս ունեմ, կարծում եմ, որ հնարավորությունը մոտեցել է: Պետք է պետությունը միշտ ամրանա եւ հնարավորության սպասի, նույնն էլ մենք՝ պետության ամրացման համար պետք է անընդհատ աշխատենք եւ հնարավորության սպասենք: Եվ այդ հնարավորությունն այսօր արդեն եկել է: Հայաստանը սիրել է պետք, եւ ինքդ քեզ պետք է սիրես, քո ինքնությունը:

**Հուսիկ Արա**

# ԱՆՆԱՆ ԳՆԱՑ, «ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐԸ» ՄՆԱՑԻՆ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Փաշինյան, վերջին անգամ եմ ասում քեզ՝ քեռուն դոմփել չեն սովորեցնի: Դա, նախ՝ շատ ծիծաղելի է եւ ապա՝ անշնորհակալ գործ: Դու իբր բիզնեսից բան ես հասկանում, մի հատ էլ բիզնեսմեններին հավաքել գլխիդ, բացատրում ես, թե որքան լավ է լինելու, եթե դու մնաս վարչապետի աթոռին: Թե բա՝ նախաճաշ...

Ի դեպ, մուտքավճարն ինչքա՞ն էր: Աննայի «վեչերինկաները» հաջողակ բիզնեսմենուհիների եւ որոշ բիզնեսմենների հետ դեռ կարելի էր հասկանալ: Դե, վարչապետի կին էր, որոշակի քմահաճույքներ ուներ, նվերների ու փողի հանդեպ կանացի հետաքրքրություններ... Ինչ եղել՝ եղել է: Դա անցավ, գնաց: Բայց դո՞ւ ինչու ես բիզնեսմեններին հավաքել գլխիդ, ինչի՞ կարիք ունես: Փողի՞: Եթե ոչ, ապա ուրիշ ինչի՞ մասին ես խոսելու Սամվել Ալեքսանյանի կամ Խաչատուր Սուքիասյանի (աչքովս չընկավ) հետ: Քո կառավարությանը հարցում եմ ուղարկել, թե սեպտեմբերին պատերազմ սկսվելու դեպքում մեր ժողովրդին քանի՞ օր կբավարարեն պահուստավորված շաքարավազը, հավի բուդը, սառեցված միսը, հացահատիկը, բենզինը եւ այլն: Ինձ պատասխանել են՝ ձեզ հետաքրքրող հարցերով դիմեք Սամվել Ալեքսանյանին եւ Խաչատուր Սուքիասյանին: Դու այսօր Սամվել Ալեքսանյանին ու Խաչատուր Սուքիասյանին հավաքել ես գլխիդ, բացատրում ես՝ որը որից հետո է, որ ի՞նչ անես:

Բիզնեսմեններն էլ են, ախր, հետաքրքիր մարդիկ: Փոխանակ իրենք հրավիրեին էս Զախորդ Փանոսին, հանդիմանեին վերջին 8 տարիներին հայկական բիզնեսի գլխին բերած չարիքների համար, մի բան էլ իրենք էին վազել՝ հանդիպելու նրա հետ: Ինչքան իրար հակասող (ներմուծող-արտահանող) բիզնեսմեն կար, այնտեղ էր: Տպավորություն էր ստեղծվել, որ սրանք Նիկոլի ձեռքի տակ են բիզնեսմեն դարձել ու հիմա եկել են նրա ձեռքը սեղմելու, նրանից շնորհակալ լինելու, նրա դարակազմիկ բիզնես ծրագրերը լսելու: Այո, եկել էին լսելու բիզնեսի հետ կապված հարցերում երկու էշի գարի իրարից ջոկել չկարողացող Նիկոլին եւ գլուխները տմբտմբացնելու: Ես չեմ հասկանում, պարոնայք խոշոր գործարարներ, դուք Պուտինի ու Նիկոլի զրույցը Հայաստանի (հետեւաբար՝ նաեւ ձեր) մասին չե՞ք լսել: Բա եթե լսել եք, ինչո՞ւ նույն համերաշխ կազմով մի հայտարարություն չարեցիք, չփորձեցիք Հայաստանի վարչապետին հորդորել՝ քիթը չմտցնել հարցերի մեջ, որոնցից ոչինչ չի հասկանում: Ասեիք՝ այ տղա, դու 8 տարում ԵԱՏՄ-ի 8 նիստի անգամ չես մասնակցել, տեղյակ չես այդ կառույցի առավելություններին ու դժվարություններին, ինչպե՞ս ես քեզ թույլ տալիս խոսել ԵՄ-ի առավելությունների մասին ու մի բան էլ հոխորտալ, որ հենց ժամանակը գա, մենք մեր որոշումը կկայացնենք՝ ԵՄ մտնել, թե մնալ ԵԱՏՄ-ում: Դու մեզ՝ բիզնեսմեններիս, հարցրե՞լ ես՝ մենք ԵՄ գնալուն «դաբրո» տվե՞լ ենք: Եվ հիմա ո՞վ է պատասխան տալու Ռուսաստանում մեր բիզնեսների գլխին քար գցելու համար: Հրեն՝ Աշոտ Արսենյանի դեմ են Ռուսաստանում քրեական վարույթը վերսկսել՝ «Ջերմուկից» թունավորված եւ մահացած մարդու դեպքով, Պռոշյանի կոնյակի գործարանի արտադրանքն է արգելվել Ռուսաստանում, Խաչատուր Սուքիասյանի (աչքովս չընկավ) եւ մի խումբ այլ անձանց մուտքն է Ռուսաստան արգելված: Ո՞վ է այս ամենի թիվ 1 մեղավորը կամ, առնվազն, թիվ 1 պատասխանատուն:

Մյուս կողմից էլ, հարգելի բիզնեսմեններ, եթե դուք գոհ եք Նիկոլի կառավարումից, ապա ես ո՞վ եմ, չէ՞ որ ընկել եմ ձեր ու Նիկոլի արանքը: Կարող էի, իհարկե, չխոսել, չխնդալ ձեր ու Նիկոլի «գեղեցիկ» ճաշկերույթի վրա, բայց սիրտս ցավում է, երբ տեսնում եմ, թե ինչպես է Նիկոլը ձեզ ծառայեցնում իր ազգակործան նպատակներին եւ միեւնույն ժամանակ վտանգում թե՛ ձեր բիզնեսները եւ թե՛ հայկական կապիտալը, առհասարակ: Այդ ի՞նչ փափուկ բարձեր է դրել ձեր գլխի տակ, թե ամեն ինչ շուտով կկարգավորվի, եւ Ադրբեջանի հետ խաղաղության հեռանկարները ձեր առաջ այլընտրանքային շուկա կբացեն: Խնդրում եմ, ինձ մեկ հատիկ շուկայի անուն տվեք, որտեղ դուք կկարողանաք հաստատվել ու գործոն լինել «չերեզ» Ադրբեջան: Փչոց է այդ ամենը, ահա թե ինչ: Եվ դուք էլ գիտեք, որ փչոց է, քանզի չեմ հավատում, որ դուք այլընտրանքային շուկաների մասին ունեք նույն պատկերացումները, ինչ որ Փաշինյանն ունի:

Չէ, ինձ ինչ էլ ասեք՝ շատ անհարմար բան ստացվեց: Փաշինյանը գործարարներին հավաքել, բացատրում էր, թե ինչպես «դոմփել»: Ասում եմ՝ ծիծաղելի էր այդ ամենը տեսնելը, որովհետեւ հավաքն ինքնին այլ, ավելի «կարեւոր» նպատակ էր հետապնդում: Դա մի պրիմիտիվ փորձ էր՝ ընտրություններից առաջ հանրությանը ցույց տալու, որ խոշոր գործարարները Փաշինյանի կողքին են:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 15.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԼՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ, ԵՐԲ ՎՏԱՆԳՎԱԾ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Դանիելյանը կարծում է՝ «լավ հայը» նա չէ, որը տիրապետում է մայրենիին, ունի հռետորական ձիրք եւ դա է համարում իր միակ նվիրական զբաղմունքը: Նա վստահ է՝ երկրին հիմա ոչ թե խոսողներ, այլ գործ անողներ են պետք: Հայաստանում այսօր ամենավտանգավոր երեւույթը ոչ այնքան արտաքին պարտքն է, ոչ էլ թշնամու սպառնալիքը՝ դրանք գոնե տեսանելի վտանգներ են: Ամենավտանգավորը լռությունն է: Լռություն, որ նստել է մշակույթի մարդկանց ուսերին, մտավորականության բերանին, ինտելիգենցիայի խղճին: Մենք ապրում ենք մի երկրում, որտեղ պետությունը դանդաղ քայքայվում է, արտաքին պարտքը հասնում է միլիարդների, տնտեսությունը չի զարգանում, ազգային ինստիտուտները թիրախավորվում են, իսկ հարեւան թշնամիները բաց տեքստով հայտարարում են՝ «այս հողը մերը պիտի լինի»: Եվ այս ամենի ֆոնին մեր «լուսավորյալ խավը» զբաղված է ամեն ինչով, բացի «լույս վառելուց»: Նրանք լռում են: Գուցե դեռ նաեւ ասեն, թե ի՞նչ խոսենք, ինչի՞ց խոսենք...

Ասեմ: Ահա ինչից. վարչապետի որոշմամբ, Արման Սարոյանը (նախկին Գեւորգ եպիսկոպոսը) նշանակվել է Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի անդամ՝ որպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ: Ո՞ւմ համար պարզ չէ, որ նշանակումը, որը կատարված է առանց Հայ առաքելական եկեղեցու համաձայնության, անընդունելի է ու անօրինական, ինչպես նաեւ՝ խախտում է ՀՀ օրենսդրությունը: Պետական կամ որեւէ այլ կառույցում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ կարող է նշանակվել միայն Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ ու արտոնությամբ: Իսկ կարգալույծ հռչակված Գեւորգ եպիսկոպոսը լիազորված չէ եւ չի կարող ներկայացնել Հայոց եկեղեցին ոչ կանոնական, ոչ իրավական եւ ոչ էլ բարոյական տեսանկյունից: Բացի այդ, ներում «բառն» ու այդ հանձնաժողովի էությունն ինքնին ենթադրում են օրենքի ու բարոյականության տառի պահպանում, մի մարդ, որը չի պահել տարրական մարդկային կանոնները, դրժել է իր ուխտը, դավաճանել է իր հոտին ու համքարությանը, ինչպե՞ս կարող է այդ հանձնաժողովի անդամ դառնալ:

Դե, հայրենի քաջահմուտ այրեր, խոսեք, ընդդիմացեք, ժողովրդին բացատրեք, որ այս քայլը հերթական ոտնձգությունն է Հայոց եկեղեցու ինքնավարության եւ Ամենայն հայոց կաթողիկոսի կանոնական իրավասությունների նկատմամբ: Ձեր ձայնը լսելի դարձրեք, հասեք այն բանին, որ չեղարկվի ակնհայտ ապօրինի այդ որոշումը: Չեք արել, չեք անում՝ «միահեծանն» էլ նորանոր անօրեն որոշումներով է մեզ «կերակրում»: Լռում եք:

Լռում եք այնպես, կարծես լռությունը կարող է փրկել թե՛ ձեզ, թե՛ մեզ: Կարծես եթե չխոսենք, պատմությունը կշրջանցի մեր «դռները»: Չգիտե՞ք, որ պատմությունը ներս մտնել գիտի: Եթե վաղը թուրքական զորքը մտնի այս հողը, ո՛չ Նիկոլ կլինի, ո՛չ իշխանություն, ո՛չ էլ նրանց խանությունը: Այդ ժամանակ հարց կծագի՝ դուք ո՞ւմ մշակույթի գործիչներն ու ինտելիգենցիան եք դառնալու: Թշնամո՞ւ: Օկուպացիա՞յի: Թե՞ պարզապես անհետանալու եք պատմության աղբանոցում՝ որպես «լռության ասպետներ»: Մշակույթի մարդիկ, ինտելիգենցիան երբեք չեն սահմանվել դիպլոմով: Դրանք սահմանվել են պատասխանատվությամբ: Եվ միշտ եղել են այն խավը, որն առաջինն է զգացել վտանգը, առաջինը բարձրացրել ձայնը, առաջինն է ասել՝ «այստեղ կարմիր գիծ է անցնում»: Եթե դա չեն անում, դառնում են ոչ թե չեզոք դիտորդ, այլ՝ մեղսակից:

Այսօր մենք գործ ունենք մի երեւույթի հետ, որը կարելի է անվանել միայն մեկ ձեւով՝ բարոյական կապիտուլյացիա: Սա միայն վախկոտություն չէ, հարմարվողականություն է: Սա մտածողություն է, որտեղ մարդն ասում է. «Երկրի հերն էլ անիծած, միայն թե ես իմ փոքրիկ հարմարավետությունը չկորցնեմ»: Սա այն վիճակն է, երբ մշակույթի մարդը դադարում է լինել մշակութային եւ դառնում է պարզապես «կահույք»՝ գեղեցիկ, բայց անշարժ ու անպիտան: Երբ Եկեղեցին թիրախավորվում է որպես պետականության հիշողություն, իսկ դու լռում ես, դու օգնում ես հիշողությունը ջնջելուն: Իսկ հիշողություն չունեցող ժողովուրդը երկար չի ապրում:

Ամենացավալին այն է, որ այս լռությունը վարակիչ է: Ժողովուրդը տեսնում է՝ եթե խոսք ունեցողը լռում է, ինքն ինչո՞ւ խոսի: Եվ այդպես լռությունը դառնում է ազգային «հիմնավորում», իսկ պարտությունը, ետընթացը՝ բնական վիճակ: Հստակ ասենք՝ լռելու իրավունքը չի գործում, երբ վտանգված է պետությունը: Լռելն ընտրություն է: Եվ այդ ընտրությունն ունի մեկ անուն՝ բարոյական դավաճանություն: Հենց դա էլ գրվում է պատմության «գրանցամատյանում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am